№ 72 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 7

1906

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 7 № 72

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ապրիլի 2-ին Շուշի քաղաքում վախճանվել է

ԵՂԻՍԱԲԷԹ ՎԱՐԱԶԵԱՆՑԸ

Թաղումը տեղի կունենայ նոյն քաղաքում ուրբաթ օրը. ապրիլի 7-ին։ Հանգուցեալի աղջիկը, Հռիփսիմէ Շխեանցը, թոռները՝ Սաթենիկ Վարազեանը և բժիշկ Արտաշէս Շխեանցը, խնդրում են ազգականներին և բարեկամներին շնորհ բերել հանգուցեալի հոգեհանգստեան, որ տեղի կունենայ շաբաթ օրը, ամսիս 8-ին, Կուսանաց մենաստանի ս. Ստեփաննոս եկեղեցում։ Հոգեհանգստի սկիզբը ժամի 12-ին։

1—1

Նախազգուշացում

Յայտնում եմ ի գիտութիւն իմ գնողների, որ Չիրկասի շաքարի գործարանի արտահանած շաքարի վաճառելը և պատուէրների ընդունելութիւնը Թիֆլիսի վիճակում—Ուզժարայում, Ալէքսանդրոպօլում, Կարսում, Երևանում և Թիֆլիսից մինչև Անդրկովկասի երկաթուղիների ամբողջ գծով մինչև Քութայիս,—վերապահված է և յիշեալ ընկերութեան կողմից տրված է միմիայն ինձ։

Այն մարդիկ, որոնք Թիֆլիսում ցոյց կը տան իրանց ներկայացուցիչներ Չիրկասի շաքարի գործարանի արտահանած շաքարը վաճառելու գործում, այդ բանի համար չունեն ոչ մի իսկական լիազօրութիւն, ուստի ընկերութիւնը նրանց խարդախութեան վերաբերմամբ պատասխանատու չէ կարող լինել։

Դ. Ս. Բէրկօվիչ. Թիֆլիս, Միքայէլեան պր. տուն № 149.

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՓՕՎԻՉ
ԳՈՒՐԳԷՆՕՎ

Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինէկօլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆէսոր Տօլօչինօվի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին։ Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը։ Գօլօվինսկի № 12, տուն Միլովանի, Արտիստական ընկերութեան հանդէպ։

(չ.հ.ու.) (աու) 7—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Գիւղերի վերականգնումը. Մամուլ. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Սահմանադիր-ռամկավարների դասախօսութիւնները. Պատերազմ կանաչ և դեղին աֆիշների դէմ. Կոմս Կանցիրը չէ վհատում. Էջմիածնի ճեմարանի օրագրից. Հայերի և աբխազների ընդհարում Սուխումում. Ո՞ւր է թաղված շան գլուխը. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Առաջին ընտրութիւնները նպաստաւոր հետևանքներ ունեցան։

Ընտրվել են մեծ մասամբ ձախակողմեան պատգամաւորներ, որոնց մէջ պատկառելի տեղ են բռնում սահմանադիր-ռամկավարները։

Դեռ մնում է ընտրել պարլամենտի կէսից աւելին։

Եթէ մի որոշ աստիճան հաւանականութեամբ ենթադրենք, որ առաջիկայ ընտրութիւնների մէջ էլ սահմանադիր-ռամկավարները կարող կը լինեն գրաւել բաւականաչափ ձայներ, այն ժամանակ մենք կունենանք Պետական Դումայում ձախակողմեան բանակի համար մի այնպիսի ոյժ, որ ընդունակ կը լինի գործնական ազդեցութիւն ունենալ պարլամենտական որոշումների վրա և առաջ մղել ծրագրական էական կէտեր։

Ամենայն դէպս, ընտրութիւնները աւելի մխիթարական հետևանքներ տուին, քան ենթադրում էին շատերը, տեսնելով յետադէմ տարրերի յանդուգն սպառնալիքները և նրանց միացած գործունէութիւնը։

II

Սահմանադիր-ռամկավարների աջողութիւնը քաջալերական է և միևնոյն ժամանակ ուսանելի։

Այդ աջողութիւնը ցոյց է տալիս, որ որոշ ծրագրային պահանջներ նուաճել են արդէն հասարակութեան մեծ խաւեր և կեանքը այլ ևս չէ կարող ամփոփվել իր նախկին շրջանակներում։

[illegible] այլ ևս չէ հաւատում հին ռեժիմի թէ յայտնի [illegible] գործողներին և միայն վստահութիւն ունի դէպի այն գործողները, որոնք խմբվել են արմատական փոփոխութիւնների ծրագիրների շուրջը։ Ահա այդ գործողների հետ միասին և նրանց ներկայացուցչութեամբ նա ցանկանում է գնալ պարլամենտ և իր խօսքով, համոզմունքով, ոգևորութեամբ և վերջապէս իր ոգով քուէով ազդել պետական գործերի վրա։

Իրականութիւնը, հնի անպատկառ ապարանքները վերջին ամիսներում դեռ իրաւունք չեն տալիս հաւատալու ռուսական պարլամենտի անվրդով գործունէութեան, բայց ժողովրդական ներկայացուցչութեան հաստատվելը մի հանգամանք է, որ ունի իր ճակատագրական տրամաբանութիւնը, որը անտես անել՝ կը նշանակէ չըմբռնել կատարվող երևոյթները։

III

Կայսրութեան բոլոր մասերը զբաղված են ընտրողական ագիտացիայով մեծ կամ փոքր չափով։

Այդ շարժման մասնակից է և Անդրկովկասը, որը չը նայելով իր ձախորդ հանգամանքներին և ծանր տրամադրութեան, հրաւիրված է պետական ընդհանուր կեանքի ղեկավարութեան գործին։

Եւ մենք պէտք է գնանք կատարելու քաղաքացիական այն պարտաւորութիւններից մէկը, որ խոշորներից և սրբազնագոյններից մէկն է բոլոր քաղաքակիրթ երկիրներում։

Մեր մէջ լսվում են ձայներ, որոնք ասում են թէ չը պէտք է մասնակցել ընտրութիւններին, որովհետև Պետական Դուման դեռ այն ժողովրդական պարլամենտը չէ, որ պէտք է ապահովէ ժողովրդական ներկայացուցչութիւնը կատարեալ կերպով։

Բայց այստեղ կատարվում է այն սխալներից մէկը, որոնք առաջ են գալիս, երբ պատմական պայմանների համադրումը չէ կշռված և գնահատված ըստ էութեան։

Ճիշտ է, որ ռուսական պարլամենտը այն պարլամենտը չէ, որ կարողանայ կոչվել համաժողովրդական։ Այդ ճիշտ է։ Պէտք է մաքառել և մաքառել իսկապէս պարլամենտ ստանալու համար, բայց մեր առաջ դրված է մի հարց՝ թէ արդեօք չը պէտք է մենք հէնց նոյն իսկ այժմեան պարլամենտը ծառայեցնենք մեր նպատակների համար և աշխատենք նրա միջոցով հարթել ճանապարհը մեր պահանջների աջողութեան համար։

IV

Պարլամենտը, ներկայացուցչական որոշումներ անելու կարողութիւնը, ժողովրդական քուէն—չափազանց զօրաւոր գործօններ են, որպէս զի մենք նրանց վրա չը նայենք արհամարհական աչքով և նրանց դէն շպրտենք։ Պարլամենտը իբրև մի նոր, հեղինակաւոր ոյժ, կը սկսէ գործել և ազդել կեանքի վրա։

Հին ռեժիմի տեղ գործող պարլամենտը, որ պէտք է առաջին փորձը անէ հրապարակ հանելու ժողովրդի ձայնը, անկասկած կը ներկայացնէ նրան շատ թերի և անկատար, բայց նա պարունակում է իր մէջ սաղմեր ապագայ աւելի ուժեղ ներկայացուցչութիւն հանդէս բերելու և հեղինակաւոր դառնալու։

Մենք պէտք է գնանք պարլամենտ և փորձենք նրա միջոցով ստանալ այն, ինչ համարում ենք անհրաժեշտ և անյետաձգելի։ Իսկ եթէ պարլամենտը մեզ չի տալ մեր ցանկացածը, այն ժամանակ հարց կը ծագէ միջոցների մասին, որոնք պարլամենտից դուրս են։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք ստացանք Շուշուց հետևեալ հեռագիրները՝

Շուշի, 1 ապրիլի, 11 ժամ երեկոյեան.

Երէկ, մարտի 31-ին, հասան Փոխարքայի կողմից նշանակված այն յանձնաժողովի անդամները, որ պէտք է քննի հայ գիւղերի աւերումների գործը,—Վէյդենբաում հայ-թուրքական յանձնաժողովի երկու անդամների հետ միասին՝ Կազանալիպօվ և Յարութիւնեան։

Այսօր հարցաքննութեան հրաւիրվեց գիւղերից եկածների մի մասը։ Վաղը յանձնաժողովը ճանապարհ կընկնի դէպի գիւղերը։

Անցեալ օրը, Թարթարի շրջանում, Թուրքական Ջատարլի գիւղի մօտ սպանված են չորս կօզակներ։ Կողոպտված են հրացաններ և ձիեր։

—

Շուշի, 4 ապրիլի, 9 ժամ 55 ր.

Վարանդայում կօզակների ձեռքով կատարված բռնութիւնների փաստերը աւելի ևս հաստատվում են գիւղերից եկող բազմաթիւ շինականների ցուցմունքներով։

Յատուկ յանձնաժողովի գալու լուրը թափանցել է գիւղերը, տանջանքների ենթարկված գիւղացիները շարունակում են երևալ յանձնաժողովի մօտ անյայտ [illegible] իրանց հետ, բուռն [illegible]թիւնների դէմ։

Յանձնաժողովի անդամները մտադիր էին ապրիլի 3-ին ուղևորվել դէպի վնասված գիւղերը, բայց ստանալով գեներալ-նահանգապետ Ալխանեանից հեռագիր, որ անյապաղ նրանց կանչում էր Աղդամ, գնացին այնտեղ, իսկ այնտեղից անցան գիւղերը։

Անհամբեր սպասում ենք քննութեան հետևանքներին եղելութեան բուն վայրերում։ Յոյս ունենք որ բարձր իշխանութիւնը բաւարարութիւն կը տայ մեր վիրաւորանքներին ու զգացմունքներին և խստիւ կը պատժէ ապօրինութիւնները և բարբարոսութիւնները։

Աշոտ եպիսկոպոս

—

Գետաշէն գիւղ, 28-ին մարտի։

Ամսիս 23-ին, առաւօտեան ժամը 4-ին, գիւղս մտնելով կէս հարիւրեակ կօզակ մէկ օֆիցէրով՝ տեղական պրիստաւի հետ, իսկոյն պաշարեցին գիւղը, թոյլ չը տալով մարդկանց տներից հեռանալու։ Նոյն օրը, ժամը 12 անց եկաւ գնդապետ Ֆօն-Օզերօվսկի, հետը ունենալով գաւառապետի օգնական Լակատօշին, երեք օֆիցէրի, երկու թնդանօթ, մէկ հարիւրեակ կօզակ։ Տանուտէրի առաջնորդութեամբ Ֆօն-Օզերօվսկին անցաւ գիւղի դէմ, փոքրիկ գիւղամասը, գիւղը ռմբակոծելու համար թնդանօթները մի յարմար տեղ դրեց, յետոյ ամբողջ զօրքով իջաւ երկդասեան դպրոցի տանը. իսկոյն դըպրոցը փոխվեց մի կատարեալ զօրանոցի։ Իբրևնադէմին գնդապետը կանչեց ժողովրդին, թարգման ունենալով Աբրեբեանց քահանային և ասաց հետևեալը. «Ես եկել եմ գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ։ Նրա պատուէրի համաձայն, գիւղը մտնելուն պէս, պէտք է ռմբակոծէի, բայց այդ ես չարի, յուսալով որ, ինչպէս Ասկերանի հայերը կատարեցին իմ բոլոր պահանջները, նոյնպէս և դուք կը կատարէք, այն է՝ վաղը մինչև ժամը 12-ը, յանձնել բոլոր զէնքերը, փախած զինուորներին և պետական տուրքերը։ Աւելացնում եմ, որ ես հայերի մասին լաւ կարծիք ունեմ դեռ շատ վաղուց. նրանց արժանաւորութիւնը տեսել եմ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ. հաւատացէք, երդվում եմ ձեր քահանայի և ուսուցիչների առաջ (գտակը վերցրեց, երեսը խաչակնքեց), որ դէպի ձեզ ոչ մի թշնամութիւն չունեմ. կը կատարէք լիովին պահանջներս, շնորհակալութեամբ կը հեռանամ, չէք կատարիլ, ստիպված կը լինեմ ռմբակոծել գիւղը»։

Ժողովրդի միջից Վիսի-ապերը առաջ շարժվելով ասաց. «Ձեր խօսքերը մենք ուշադրութեամբ լսեցինք, մենք չենք ուզում գլխապատանք տալ ձեզ, գիտենք, որ յոգնած կը լինէք. թէ մեր պապերը և թէ մենք ռուս կառավարութեան դէմ երբէք չենք եղել, այժմ էլ չենք, վաղը կը կատարենք ձեր պահանջները, միայն խնդրում ենք այսքանը՝ եթէ դուք՝ շնորհիւ հայ-թուրքական ընդհարումների կամ այլ կռիւների՝ մեզ յանցաւոր էք ճանաչում, աւելի յանցաւոր ճանաչեցէք նրանց, որոնք մեզ այս օրին հասցրին։ Թող Աստուած տեսնէ, թէ այս կռիւները ով է սկսել և ով է վերջացնում»։ Ժողովուրդը ցրվեց։

Հետևեալ օրը, մինչև ժամը 1-ը, տուին լիովին տուրքերը։ Պարզվեց, որ ամբողջ հասարակութիւնից փախած կայ մէկ զինուոր, այն էլ չէ եկած գիւղը, ուր լինելն էլ չը գիտեն. յանձնեցին 35 հրացան, 15—20 խանչալ։ Սուլուք, Ազատ, Արյաշ և Ղարաբուլախ հայ գիւղերից էլ ստացվեց 4-ական հրացան։ Օզերօվսկին չը բաւականանալով զէնքերով, ասաց թէ դուք օյինբազութիւն էք անում, ես զէնք եմ պահանջում ձեզանից, իսկ դուք կոտրատած անպէտք բաներ էք հաւաքում առաջս. չարդախլուեցիք էլ այսպէս արին, բայց որ թնդանօթները որոտացին, այն ժամանակ գիւղից եկան երեք գծանի հրացաններ և թնդանօթներ։ Գիւղացիք ասացին. «Ախար Չարդախլուն կրակի բերանումն է եղել, կարող էին պաշտպանվելու համար շատ զէնք պահել, իսկ մենք, փառք Աստուծու, շրջապատված լինելով հայ գիւղերով, կատարեալ ապահով ենք ապրել, դրա համար քիչ զէնք ենք ձեռք բերել. հաւատացէք, որ այդ զէնքերով մենք ամիսներով գիշեր ենք պահել գիշեր-ցերեկ, խաղաղութիւնը կամաց-կամաց տեսնելով, զէնքերը ձգել ենք, քունջ ու պուճախներում ընկած լինելով, ժանգոտվել են»։

Սակայն անողոք զէնքի ահռելի բերանը ուղղվեց դէպի անշունչ զոհերը։ Լռութիւնը խորհրդաւոր էր։ Չը նայած նախազգուշացումներին, ոչ ոք իր տանից չը հեռացաւ։ Կանայք, երեխայք բոլորն էլ կտուրներից դիտում էին աներկիւղ։ Թնդանօթները զանազան տների վրա որոտացին տասն և վեց անգամ, տասն ու մէկ տուն կտուրների ծածկե[illegible] թեթև փշավեցին։ [illegible] չեղան. [illegible]խայ, կան երկիւղից անկողին ընկած կանայք. ասում են, որ երկուսը վիժել են։ Խուզարկվեց մէկ տուն, գտնվեց մէկ թուր, այն էլ վերադարձրին յետոյ։ Խուզարկեցին և Ջրաղացի արխերը, բայց զէնքի տեղ ձուկ գտան։ Օզերօվսկին երկրորդ, երրորդ անգամ զէնք պահանջեց, սպառնալով գիւղը քարուքանդ անել, բայց գիւղացիք կտրուկ կերպով պատասխանեցին, որ զէնք չունեն, եթէ կառավարութեանը հաճելի լինէր, խոստանում էին զէնք առնել ու տալ։ Ֆ.-Օզերօվսկին հինգ օր մնաց Գետաշէնում, բոլոր ծախսերի համար լիովին վճարեց, բացի վառելիքից, որը հասարակութեան վրա էր։ Կօզակներից ոչ մի կոպտութիւն կամ անկարգութիւն չը տեսան գիւղացիք։ Գնդապետը ասել էր, որ եթէ զօրքից մի պակասութիւն տեսնեն, իսկոյն իրան ասեն։ Այսպէս հինգ հայ գիւղեր զինաթափ եղան, իսկ դրացի թուրքերը մնացին։ Տեսնենք՝ իր խոստման համաձայն Ֆ.-Օզերօվսկին յետոյ ինչպէս պիտի վարվէ և թուրքերի հետ։ Այժմ վերադարձաւ Ելենենդորֆ։

Մկրտ. Բաղդասարեան

—

Ուզունթալա (Ղազախի գաւ.), 3 ապրիլի.

Մարտի 31-ին հաշտարար միջնորդը և երրորդ գաւառամասի պրիստաւը եկել էին Ուզունթալա կայարանը։ Ժողովելով հինգ հայկական գիւղի պատգամաւորներին՝ առաջարկեցին վճարելու Թուրքական Բարխուդարլու, Սօթուլու, Զախմախլու և Զաքարլու գիւղերի վնասները։

Սակայն այդ թուրք գիւղերը իրանց տաւարը հեռացրել էին դեռ ընդհարումից առաջ։ Գեներալ Լեվիցկին ինքն էլ նկատել էր թուրքերի չափազանցութիւնները և կանգ էր առել 7000 րուբլի գումարի վրա։

Հայերը առաջարկեցին իրանց հաշւով վերանորոգել տները։ Հաշտարար միջնորդ իշխան Ճավճավաձէն անընդունելի գտաւ հայերի առաջարկը և սահմանեց, որ հայերը տան փողով 4000 րուբլի։ Հայերը ի պատիւ Լեվիցկու միայն ընդունեցին այդ առաջարկը, պայման դնելով որ 4000 րուբլին տրվի երեք տարվայ ընթացքում։ Իսկ թուրքերը պնդում են, որ տրվի 7000 րուբլի և կէսը այժմ, իսկ կէսը սեպտեմբերին։

Առաջիկայ ապրիլի 6-ին նշանակված է հայերի և թուրքերի ներկայացուցիչների ժողով Լեվիցկու մօտ՝ վերջնականապէս վճռելու խնդիրը։

Լեվիցկու հրամանով բանտարկվածները արձակված են մարտի 20-ին, իսկ քննիչի կարգադրութեամբ բանտարկվածները արձակվեցին ապրիլի 1-ին՝ երաշխաւորութեամբ։

Տ.

—

Գօրիս, 4 ապրիլի։ Զորրորդ մասում թուրքերը սպանեցին պրիստաւի գործավար Տրիգեանցին, վիրաւորեցին մի պահակի, սպանեցին միւսի ձին և կողոպտեցին բոլորին։ Գաւառապետ Միխկեվիչը շտապեց դէպի վայրը։ Մօտ օրերս գերի տարան զէյվացի մի հայի իր ձիով, սպանեցին երկրորդ հային. կօռնձօրցի ծերուկ հային աջողվեց ազատել գերութիւնից։

—

Ջիվանշիրի գաւառում մի խումբ աւազակների ձեռքով սպանվել են Լարինսկի գնդի 4 կազակներ, որոնք գնում էին Եւլախ կայարանը։ (Հ. Գ.)

—

Նուխում մօտ, թաթար աւազակային խմբի և մի վաշտ դրագունների մէջ բռնված հրացանաձգութեան ժամանակ սպանված են պրիստաւի օգնական Մամէդօվը և մի դրագուն, անյուսալի վիրաւորված են պրիստաւի օգնական Բարնաբօվը և 3 դրագուններ։ Աւազակները անյայտացել են. նրանց կորուստների թիւը չէ պարզված։ Ջիվանշիրի գաւառում կօզակների և աւազակների մէջ տեղի ունեցած հրացանաձգութիւնից յետոյ, որի ժամանակ սպանվել են 4 կօզակներ,—բռնված են 4 մեղսակիցներ, որոնց կօզակները բանտ տանելիս սպանել են։

—

Ամերիկայից ստացված վերջին հայ թերթերը հաղորդում են, որ Ամերիկայի Հայոց Գաղթային Խորհրդի նախաձեռնութեամբ Նիւ-Եօրկի մէջ կատարված հանգանակութեան գումարը ի նպաստ Կովկասի հայ տառապեալների հասել է 2026 դօլլարի (մօտ 4000 րուբլու)։ Այս գումարը Գաղթային Խորհրդի ատենապետ Մ. Գաբրիէլեան ուղարկել է Ամենայն Հայոց Հայրապետին՝ Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովին հասցնելու համար։

—

Եգիպտոսի հայ լրագիրներն ևս մի քանի ժամանակ հաղորդեցին, որ Նուբար փաշայի որդի Պօղոս փաշան նոյնպէս ի նպաստ Կովկասի հայ տառապեալների ուղարկել է Կաթողիկոսի Դի[illegible] Նպաստամատոյց Յանձնաժո[illegible] անհրաժեշտ է, ի նկատի ունենալով, որ Յանձնաժողովը ներկայումս դրամի անհագին կարիքներ ունի [illegible], աւերված հայ գիւղերի վերականգման մասին իր մշակած ծրագիրը իրագործելու համար և նրա յոյսը՝ ստանալու Պետերբուրգի եկեղեցական խորհրդից 100,000 րուբլի այդ նպատակի համար, չիրականացաւ, որովհետև խորհուրդը որոշել է տալ միայն 10,000 րուբլի։ Ցանկալի է, որ Կաթողիկոսի Դիւանատունը շտապէր օր առաջ հասցնել Նպաստամատոյց յանձնաժողովին վերոյիշեալ գումարները։

—

Առաջ ենք բերում այն հեռագրի պատճէնը, որ Շուշու հայ մայրերի և քոյրերի լիազօրները մարտի 28-ին ուղարկել են Նորին Կայսերական Մեծութեան Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնային.

«Մենք, հեռու Կովկասի, Գանձակի նահանգի, Շուշու քաղաքի հայուհիներս, աղերսանքով Ձեր գթասրտութեանն ենք դիմում, ամենաողորմած Թագուհի, և, փարելով Ձեր ոտներին, աղաչում ենք լսել մեր վիշտը և Ձեր հզօր խօսքով դադրեցնել տալ այն աննկարագրելի արհաւիրքները, որ գործադրում են մեր քոյրերի ու եղբայրների դէմ մեր աչքերի առաջ Գահի անխելք ծառաները, որոնք փոխանակ բարեկարգելու և պաշտպանելու, պատճառում են աւեր, կործանում։ Մեր աղերսը Ձեզ ենք ուղղում, Թագուհի, որովհետև Դուք, միմիայն Դուք, որպէս կին, ընդունակ էք ըմբռնելու մեզ պատճառած թշուառութեան անսահման մեծութիւնը և ցոյց տալու Ձեր անսահման գթութիւնը, հրամայելով վերջ տալ դրանց։ Մի ամբողջ տարվայ հայ-թուրքական կատաղած արիւնահեղ սարսափներից յետոյ, որի ընթացքում մեր հայրերը, եղբայրները, ամուսինները կուրծքները դէմ տրած և ափնահեղ զոհերի գնով պաշտպանում էին թուրքական վայրենի հորդաների դէմ իրանց քրտինքի վաստակով ձեռք բերած ինչքը և ընտանեկան օջախի սրբութիւնը, մեզ, հայերիս վրա, պայթեց մի նոր և աւելի ահեղ արհաւիրք, որի յանցաւորների դէմ մեր հայրերը, եղբայրները և ամուսինները չունեն ոչ ոյժ և ոչ հնարաւորութիւն պաշտպանվելու։ Չը նայելով հայերի դարաւոր հաւատարմութեանը Ռուսական Գահին և անձնուէր ծառայութեանը Ռուսաց Ինքնակալին ռազմի դաշտում և քաղաքացիական ասպարէզում, նրանց դէմ այնուամենայնիւ ինչ որ հալածանք է սկսված, որի նմանը մեր պատմութիւնը չէ յիշում նոյն իսկ մահմեդական տիրապետութեան ժամանակներից։ Մեր գաւառն է ուղարկված կօզակների թռուցիկ խումբը իբրև թէ հայերին և թուրքերին խաղաղեցնելու և նրանց մէջ կարգը և հանգստութիւնը վերականգնելու համար։ Այդ զօրախումբը, որի հրամանատարն է փոխգնդապետ Վեյերը և որի գործողութիւնները ղեկավարում են գաւառապետ Ֆրեյլիխը և հաշտարար միջնորդ Երմոլաեվը, գաւառի խաղաղ հայ ազգաբնակութեան վրա այնպիսի սարսափելի բաներ է գործադրում, որոնց նկարագրելը երակների մէջ արիւն է սառեցնում։ Զինաթափ անելու պատրուակով, կօզակները մտնում են անպաշտպան ազգաբնակութեան տները, կողոպտում են բոլոր արժէքաւոր իրերը, ոչնչացնում ու անպէտք են դարձնում ժողովրդի վերջին ստացվածքը, թափում են հացահատիկների սուղ պաշարը ցեխի մէջ և հէնց այդտեղ էլ ոտնահարում-տրորում են, գիւղացիներին գանագծում և ենթարկում ամենասարսափելի տանջանքների, որոնց շնորհիւ մահվան դէպքերը հազուագիւտ չեն, և կատարում են այնպիսի ուրիշ շատ բաներ, որպիսիները չեն կատարվում նոյն իսկ թշնամու երկրում։ Եւ ահա, դեռ ևս թուրքերի ձեռքով հրդեհված գիւղերի և քաղաքների միացող աւերակների առաջ երևում են նոր աւերակներ կօզակների ձեռքով կատարված, և թուրքերի ձեռքից ընկած զոհերի դեռ ևս թարմ գերեզմաններին կից աւելանում են նորերը կօզակների շնորհիւ։ Եւ այդ բոլորը կատարվում են նրանց հրամանատարների ներկայութեամբ։ Բայց որ ամենասարսափելին է և որ կարող է վրդովեցնել խորապէս ամեն մի կնոջ, դա այն է, որ պղծվում է ամեն մի կնոջ համար ամենանուիրական սրբութիւնը—նրա կուսութիւնը. իրանց ամուսինների, եղբայրների և հայրերի աչքերի առաջ բռնաբարվում են կանայք, քոյրերը և աղջիկները, սկսած 60 տարեկան պառաւներից մինչև 11 տարեկան աղջիկները։ Չեն խնայում նոյն իսկ երկունքով բռնված կանանց անկողինները։ Այդպիսի արհաւիրքների են ենթարկվել մեր գաւառում, սկսած մարտի 15-ից՝ Թաղ, Տօղ, Ազօխ, Տումի, Սօս, Ճարտար և այլն։ Դրա շնորհիւ բնակիչներից շատերը, առանց ուշադրութիւն դարձնելու լեռների բուքն[illegible] ներում ու լեռների խոռոչներում [illegible] թէ ինչու, Ձերդ Մեծութիւն, համարձակվում ենք դիմել Ձեր գթութեանը և խնդրել մեր լլկված քոյրերի և ձմեռային սառնամանիքից անտառներում նրանց ցրտահար եղած, կապտած երեխաների անունից, որ հրամայէք վերջ տալու այդ չը լսված սարսափներին։ Լիայոյս՝ մեր ներկայ աղերսը արկանում ենք առաջ Ձերդ Մեծութեան, որպէս բոլոր տառապեալների և անարգվածների մօր։ Շուշի քաղաքի մայրերի և քոյրերի կողմից ընտրեալներ՝ Մարիամ Դօլուխանեան և Նադէժդա Ավանեսօվա։

—

Մօտաւորապէս նոյն իմաստով մի հեռագիր էլ ուղարկել են Թիֆլիս, Փոխարքայի ամուսին կոմսուհի Վորոնցովա-Դաշկովային, որը և բարեհաճել է պատասխանել.

«Իմ ամուսնու հրամանով ձեզ մօտ է ճանապարհվել գեներալ-նահանգապետը։ Աստուծոյ օգնութեամբ ամեն ինչ կը խաղաղվի. ձեր հեռագիրը կարդալով, ցաւեցի»։

Կոմսուհի Ելիզավետա Վորոնցովա

Մարտակերտ, (Ջիւանշիրի գաւառ), մարտի 29-ին.

Այսօր կէսօրին, մարտի 29-ին, Փափռաւենդ և Բոյամադլու թուրք գիւղացիք թալանում են Կուսապատից Առաջձոր տանող ճանապարհով գնացողներին, որոնք Մարտակերտ գիւղից ցորեն առած՝ տանելիս են լինում, մօտ տասը, տասն և հինգ բեռնաւորներ։ Երբ անցնելիս են լինում Ջանեաթաղ հայ գիւղից հեռու երկու վերստ ճանապարհով, Մանուքլու կոչված տեղով, թուրքերը պատրաստ են լինում այդտեղ, սկսում են հրացաններ պարպել հայերի վրա դալպերով. հայերը անզէն լինելով՝ մի կերպ անտառում թաքնվելով՝ ազատում են իրանց կեանքը, թողնելով ձիերը բեռներով թուրքերի ձեռքում։ Հայերը իրանց երեխաների համար ցորեն տանելիս են լինում, որ սովից ազատեն։

Ս. Զաքարբէկեանց

—

Գանձակից «Тифл. Лист.»-ին հեռագրում են ապրիլի 3-ին. «Ապրիլի 1-ին Գավառի մօտ թուրքերը գերի տարան Սարգիս Յովսէփեանցին»։

Գանձակ, 4 ապրիլ։ Քիւրդամիր կայարանում տեղի ունեցաւ գնացքների ընդհարում։ Սպանված է անյայտ մի լեզգի։

—

Ղազախի գաւառի Ուզունթալա գիւղից հաղորդում են, որ գողերը յարձակվել են Տէր-Յովհաննիսեանի խանութի վրա և գողացել մանուֆակտուրի ապրանքը, չորս գլուխ շաքար և ուրիշ իրեր, ընդամենը 500 բուբլու արժողութեան. գողերը չեն բռնված։

ԳԻՒՂԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Գանձակ գնացած մասնաժողովի անդամներ Արսէն Քալանթար և Գարեգին Սարգսեան մի քանի օրով գալով Թիֆլիս, ներկայացրին նպաստամատոյց յանձնաժողովին մի զեկուցում, որից առաջ ենք բերում հետեւեալը՝

Բաղա գիւղը ունի պաշտօնապէս 241 իսկ իրապէս, կամ ինչպէս գիւղացիները ասում են «մառաղ ուսող»՝ 400 տուն։ Ընդամենը մօտ 2700 հոգի, որոնցից մօտ 200 հոգի անյայտ են, սպանվել են, կամ մեռել։

Բաղացիներից դեռ ոչ ոք չէ վերադարձել գիւղը, որովհետև նա բոլորովին աւերված է, անպաշտպան է և մինչև այժմ չէ քննված ոչ մի պաշտօնական մարմնի կողմից։

Նրանք պատսպարան են գտել Գանձակ քաղաքում, Բանանց, Փիփ, Խաչակապ, Կիրանց, Զարդախլու, Քարվանսարայ, Թօվուզ, Բերդ, Աղդան, Շահալի և ուրիշ գիւղերում։

Նրանք ցանկանում են վերադառնալ, բայց պահանջում են, որ նրանց տրվի հաստատ ապահովութիւն, օրինակ իրաւունք ունենալ զէնք կրելու։

Գիւղի ցանքսերը չեն փչացրված և պահպանվում են զրադուն պահապանների միջոցով։ Ցանքսերը, որոնք 550 դեսեատին տարածութիւն ունեն, եթէ ժամանակին հաւաքվեն, մեծ օգնութիւն կարող են հասցնել գիւղացիներին։

Գաւառապետը խոստացել է, որ գիւղացիների վերադարձից յետոյ նա կը դնի այնտեղ մի պահակախումբ 10 հոգուց բաղկացած։

Գիւղացիները ամենաէական ապահովութեան միջոցն են համարում, որ իրանց գիւղի և հայ Զարդախլու գիւղի մէջ լինի մի ուրիշ հայ գիւղ, կազմված գիւղը աւերված Ղազախլու և Կըրղան հայ գիւղերի բնակիչներից։

Բաղա գիւղի վերաշինութիւնը և տնտեսութեան վերականգնումը շատ ծախքեր կը պահանջէ։ Եթէ կարելի լինէր շինութեան փայտը ստանալ ձրիաբար պետական անտառներից, այն ժամանակ գիւղացիների ծախքը կը թեթևանայ և տան շինութեան համար միայն վարձատրութիւն կը տրվէր հիւսներին և երկաթեայ իրերին։

Անտառները, որոնցից կարելի էր օգտվել, հետևեալներն են՝ Շամշադինի, Չիլգադարօվի և հեռաւոր Զարեքայ վանքի։ Ամենից յարմարը օգտվելու համար Չիլգադարօվի անտառն է։ Եթէ կարելի լինէր վերցնել Չիլգադարօվից, իսկ նրան տալ փոխարէնը Շամշադինի անտառից, կը դիւրանար գործը։ Շամշադինի անտառից օգտվելը այն անյարմարութիւնը ունի, որ ճանապարհը անցնում է Թուրքերի միջով։

Եթէ փայտեղէնի ոչ մի ծախք չը գցենք, դարձեալ առնուազն հարկաւոր կը գայ 25 բուբլու ծախք ամեն մի տան վրա—հիւսնի և երկաթեղէնի վրա, եթէ ենթադրենք, որ միայն մէ սենեակ է շինվելու և միայն մի մարագ։ Իսկ եթէ աւելի բաժանմունքներ շինվելու լինեն, այդ ծախքը կը հասնի 40—50 բուբլու։ Նոյն իսկ 25 բուբլով հաշւելով՝ մենք կը ստանանք ծախք 25×400=10,000 բուբլի։

Տան կահ կարասիքներից ամենակարևորներն են ամեն մի տան համար [illegible] խմորի տաշտ (2 ր.), մաղ (50 կ.), մի յիսուն վրան (10 ր.), ընդամենը մօտ 3000 բուբլի։

Գիւղատնտեսական իրեր—40 գութան իրանց շղթաներով և պարագաներով 2500 բուբլի։

Եզներ հաշւելով գութանների թւով մօտ 20,000 բուբլու, կովեր 16,000 բուբլու, սայլեր 2500 բուբլու, գերանդիներ, մանգաղներ 1500 և ուտելու ցորեն չորս ամսվայ ընթացքում մինչև նոր ալիւր ստանալը 15,000 բուբ.։

Այդ նուազագոյն չափերով ծրագրված օգնութիւնը կը պահանջէ 75—80,000 բուբլի գումար։

Նոյն դրութեան մէջ են Խօյլար, Ղարադաղլու և ուրիշ աւերված գիւղերը։

Այժմ ամենամեծ գործը պէտք է լինի տալ գիւղացիներին կարողութիւն, որ նրանք դարնանացան անեն և այդպիսով հնարաւորութիւն ունենան ապահովել իրանց ապրուստը առաջիկայում։

ՄԱՄՈՒԼ

Ապրիլի 1-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել մի նոր հայերէն թերթ «Կայծ» վերնագրով։ Նա թէև առ այժմ լոյս է տեսնելու շաբաթական երկու անգամ, բայց լինելու է օրաթերթ՝ անտեսական, քաղաքական, հասարակական բովանդակութեամբ, ինչպէս ինքն է յայտարարում։ Խմբագրական յօդուածը յայտնում է, որ «Կայծը» «հայերէն լեզուով սօցիալ-դէմօկրատական առաջին լեզու օրաթերթն է ռուսահայերի մէջ»։ Ասենք դա մի քիչ սխալ է, որովհետև այդ ասպարիզում անդրանկութեան պատիւը պատկանում է, ինչպէս գիտենք, «Կեանք» շաբաթաթերթին։

Իր երևումը և crédo-ն նոր թերթը այսպէս է որոշում.

«Մեր օրգանը պէտք է լինի բերան հայ բանւորութեան, պրօլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան գնդերից մէկի։ Նա պաշտպան ու արտայայտիչ պէտք է լինի պրօլետարիատի վ.եմ միջազգային իդէալի։ Նա ընկեր և ուսուցիչ պէտք է լինի բուրժուական-ազգայնական իդէօլօգիային ստրուկ եղած և այդ ստրկութիւնից այժմ ազատուող հայ բանւորներին։

Թէ որն է պրօլետարիատի այդ իդէալը և որոնք են այն ճանապարհները, որ պէտք է բերեն մեզ դէպի այդ իդէալը, որոնք են այն միջոցները, որ համապատասխանում են մեր նպատակներին և այլն և այլն—այդ հարցերին նւիրված էլ կլինեն ամբողջովին մեր օրգանը և նա կաշխատի իր կարողութեան չափ ծառայել հայ բանւորութեան և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ հայ աղքատ գիւղացիութեան շահերին»։

Մի այլ տեղ, նա հետևեալն է գրում.

«Սօցիալ-դէմօկրատական թերթ հայերէն լեզուով հրատարակելու կարիքը անհրաժեշտ է եղել միշտ, մանաւանդ ներկայում, երբ հայ պրօլետարիատը, հայ բանւորութեան առաջ դրված է մի խոշոր խնդիր—պէտք է արդեօք նա ընթանայ հայ կղերական, բուրժուական-նացիօնալիստական կուսակցութիւնների հետ, և կոյր գործիք դարձած վերջիններիս՝ նեցուկ, աջակից հանդիսանայ նրանց դասակարգային շահերին և միտումներին, թէ՞ նա պէտք է իրանից ներկայացնէ իբր անբաժանելի մի անդամ այն անկախ, խիստ նշանաւոր քաղաքական կուսակցութեան, որը Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատական բանւորական կուսակցութեան անունն է կրում և որը հանդիսանում է մի ճիւղաւորութիւնը միջազգային սօցիալ-դէմօկրատական կուսակցութեան։»

Առ այժմ ոչինչ չենք կարող ասել նոր թերթի բովանդակութեան մասին, մինչև կը հրատարակվին մի քանի համարներ։ Մամուլի բաժնում «Կայծը» ի միջի այլոց մատնացոյց է անում այն հանգամանքը, որ մի և նոյն կուսակցութեան մի օրգանը («Դրօշակ») մի երևոյթ լուսաբանում է որոշ տեսակէտով, իսկ մի ուրիշ օրգանը («Յառաջը») լուսաբանում է բոլորովին հակառակ տեսակէտով։ Այդպէս է պատահում այն մարդկանց և կուսակցութիւնների հետ, որոնք դեռ չեն կարողացել նոր հոսանքների ալիքների ժամանակ որոշել իրանց ուղղութիւնը և կամ հաւատարիմ մնալ հին հոսանքին, կամ յարել նորերին։

*

«Կեանք» շաբաթաթերթը խօսելով դպրոցական խնդրի մասին մեր կեանքում և յայտնելով այն միտքը, թէ սօցիալ-դեմօկրատիան ձգտում է դեմօկրատիզացնել հասարակական հաստատութիւնները և համարելով դպրոցը հասարակական կարևոր հիմնարկութիւններից մէկը, այսպէս է որոշում դպրոցական հարցը սօցիալ-դեմօկրատիայի տեսակէտից.

«Սօցիալ-դեմօկրատիան պահանջելով, իր մինիմալ ծրագրի համաձայն, որ եկեղեցին բաժանուի պետութիւնից և կրօնը դարձնուի մասնաւոր խղճի գործ, հետևողական է, պնդելու նաև, որ կրօնն ու եկեղեցու ներկայացուցչութիւնը՝ հոգևորականների նուիրապետական (հիրարխիական) կազմակերպութիւնը, դուրս մղուի բոլոր հասարակական-կրթական հաստատութիւններից։ Սօցիալ-դեմօկրատիան չի կարող հասարակական օրգանիզմի մէջ տանել խնամակալութիւնն ու պատրօնաժը մի այնպիսի կազմակերպութեան, որի ամբողջական գոյութիւնը մի տնտեսական ու մտաւոր բարոյական դարաւոր չարիք է. աշխատաւոր ազգաբնակութեան համար սօցիալ-դեմօկրատիան, ասում ենք, չի կարող հանդուրժել մի այնպիսի կաստայական դասի գոյութեան, որ իր բոլոր ձգտումներով եղել է, սիրեն ու ապաւէնը դասակարգային տիրապետութեան, պաշտպանն ու նախաձեռնողը՝ քաղաքական բռնակալ ռէժիմի և ստրկութեան։

Ցանուն ժողովրդի մտաւոր յառաջդիմութեան շահերի, յանուն դեմօկրատական սկզբունքների իրականացման, հայ սօցիալ-դեմօկրատիան ձգտում է արմատախիլ անել կղերական իշխանութեան ու խնամակալութեան սիստեմը մեր դպրոցական հաստատութիւնների մէջ։ Նա ձգտում է վերականգնել ժողովրդական մասսայի գերիշխան (սուվերէն) իրաւունքը իր համայնական սեփականութեան նկատմամբ։ Սօցիալ-դեմօկրատիան աշխատում է դպրոցը, դաստիարակութեան որրանը դնել այնպիսի յառաջադէմ ու բարեկեցիկ պայմանների մէջ, որ աշխատաւոր ժողովրդի մանուկ սերունդը ստանայ իր պարտադիր ուսումը ձրիաբար, որ կրթութիւնը կատարուի առողջ սիստեմով, խելացի մեթօդով, որ ժողովրդի սերունդի մտաւոր պատրաստութիւնը, զարգացումը՝ լինեն պիտանի ու արժէքաւոր տարրականները, նորագոյն գիտութեան միջոցով, հեռու կրօնական նախապաշարմունքներից, որ դպրոցի վարչական ձևը դրուած լինի զուտ դեմօկրատական հիմքերի վրա, որ դպրոցները տնտեսապէս ապահովուեն, բարւոք ու նպաստաւոր դրութեան մէջ դնուեն թէ կրթուող աշակերտութիւնը և թէ կրթող ուսուցիչները, անհրաժեշտ է և սօցիալ-դեմօկրատիան պահանջում է վերձառուել, որ բոլոր այսպէս անուանուած վանքապատկան, եկեղեցապատկան և դպրոցական անշարժ թէ շարժական կալուածն ու գոյքը, մնացած թէ շրջանառութեան մէջ դրված կապիտալը, ուրիշ խօսքով՝ հոգևորականութեան ձեռքը կենտրոնացած անբաւ հարստութիւնները,—որոնք դարձեալ հայ ժողովրդի դարաւոր քրտինքի արդիւնքներն են,—առանց այլևայլութեան անցնեն ժողովրդի ձեռքը, շահագործուեն ու շահեցնուեն ժողովրդի հաւաքական ներկայացուցչութեան միջոցով յօգուտ և ի շահ իր բոլոր հասարակական կրթական-կուլտուրական հաստատութիւնների։

Ահա այս է սօցիալ-դեմօկրատիայի սկզբունքային վերաբերմունքը դէպի դպրոցական խնդիրը մեր կեանքում։ Այսպէս ենք հասկանում ու պաշտպանում մենք ժողովրդի սեփականութիւնն ու իրաւունքները՝ պրօլետարիատի շահերի տեսակէտից։

Սակայն պրօլետարիատի դասակարգային կուսակցութիւնը չի կարող իրականացնել ու հիմնապէս լուծել այդ և դրա նման շատ ու շատ կրթական-կուլտուրական ձգտումներ ու հասարակական ծանրակշիռ խնդիրներ, նախքան լուծելու ամենաէականը՝ զուտ քաղաքական խնդիրը։ Միայն այն ժամանակ, երբ յեղափոխութիւնը անդարձ կը խորտակէ ինքնակալութեան բռնակալ ռէժիմը, միայն այն ժամանակ, երբ Ռուսաստանի բազմամիլիօն ժողովուրդը ձեռք կը բերէ քաղաքական ազատագրութիւն,—անա միայն այդ ժամանակ Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւններին կը յաջողուի՝ ի շարս բազմաթիւ կենսական խնդիրների, հիմնապէս լուծելու նաև դպրոցական խնդիրը, թէ մեր և թէ Ռուսաստանի միւս ազգերի կեանքում»։

Թողնում ենք մի այլ անգամ մեր կարծիքը այս խնդրի մասին յայտնելու, և քննելու այն տարբերութիւնը, որ կայ հայ եկեղեցական-դպրոցական-կալուածական և օտար ազգերի եկեղեցական-դպրոցական-կալուածական խնդիրների մէջ։ Հայ ժողովուրդը միշտ ձգտել է, որ եկեղեցու մէջ ժողովրդի սուվերէնութիւնը (գերիշխանութիւնը) որոշ չափով և նոյնիսկ մեծ ծաւալով միշտ իրագործված լինի։

*

«Սօցիալիստ թէ՞ նացիօնալ» վերնագրով մի առաջնորդող յօդուածի մէջ Վարնայի «Իրաւունք» թերթը ջանում է ապացուցանելու, թէ մեծ սխալ են գործում բոլոր այն գործիչները և կազմակերպութիւնները, որոնք պաշտպան են հանդիսանում հայոց հարցին, երբ նրանք զբաղվում են սօցիալիստական հարցերով։ Լրագրի կարծիքով, նա, որ զբաղվում է Թիւրքահայերի դատով կամ հայոց հարցով, նա պէտք է մի կողմ դնէ սօցիալիստական ուղղութիւնը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

«Յառաջ» լրագիրը հաղորդում է, որ Հ. Յ. Դաշնակցութեան բաջօնական ժողովը, քննելով Պետական Դումայի ընտրութիւններին վերաբերեալ հարցը, որոշել է բօյկօտի ենթարկել Դումայի ընտրութիւնները հենց առաջին աստիճաններից։

—«Воля» լրագիրը հաղորդում է, որ սօցիալ-ֆեդերալիստների վրաց կուսակցութիւնը որոշել է, ի նկատի ունենալով նոր հանգամանքները, փոխել իր տակտիկան Պետական Դումայի ընտրութիւններին վերաբերեալ, այն է—յանձնարարել իր անդամներին և կազմակերպութիւններին աջակցել ընտրութիւնների ժամանակ ձախ կուսակցութիւններին, իսկ որտեղ էլ հնարաւոր կը լինի՝ անցկացնել իր թեկնածուներին ընտրողների համար։

—Նոյն լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ սօցիալ-դեմօկրատների կուսակցութիւնը վերջնական որոշումն կայացնելով 17 ձայների առաւելութեամբ՝ ընդունել է «փոքրականների» տակտիկան, որ անհրաժեշտ է մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին։

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Ուրբաթ, մարտի 31-ին, Թիֆլիսի Արտիստական թատրօնում Ի. Սեմէօնօվ կարդաց դասախօսութիւն մարդու և քաղաքացու իրաւունքների մասին։

Ահա դասախօսութեան համառօտութիւնը։

Սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը աջողութիւն ունի Պետերբուրգում, Մոսկվայում և ուրիշ քաղաքներում։ Իսկ աջակողմեանները անաջողութեան են հանդիպում։

Ինչո՞ւ։

Որովհետև վստահութիւն կայ դէպի սահմանադիր-ռամկավարների անկեղծ յայտարարութիւնները և նրանց բողոքը այն ճնշումների դէմ, որոնք ձգտում են խեղդել մարդու և քաղաքացու անհատականութիւնը ու ազատութիւնը։

Ճնշումը, որտեղից էլ նա գայ, ծանր է և անտանելի։ Կը ճնշէ բռնակալութիւնը, թէ մի նոր կազմակերպութիւն—մի և նոյնն է, անհատը պէտք է միշտ բողոքէ և ձգտէ ազատութեան։

Ալեքսանդր III-ի թագաւորութեան գործօնները, զանազան Պլեվէներ, նպատակ էին դրել ճնշել քաղաքացուն և կարծում էին, թէ նրանք ոչնչացրին գաղափարները։ Նոյն ձևով մի ժամանակ Հռոմի պապերը այրում էին այն գրքերը, որոնք խօսում էին երկրի շարժման մասին և հալածում էին այն մարդկանց, որոնք քարոզում էին նոյնը. բայց տիեզերքը փոխել չէին կարող նրանք և նրանց նզովքներով երկիրը չը կանգնեց ու արևը չը սկսեց շարժվել երկրի շուրջը։

Անձի և նրա մտքի ազատութիւնը—պէտք է լինի հիմքը այն նոր կեանքի, որի մէջ մտնում ենք, սկսելով պարլամենտական գործունէութիւն։ Պէտք է անհերքելի մի ճշմարտութիւն ճանաչվի, որ քաղաքացին ազատ է և պետութիւնը ազատ քաղաքացիների ազատ համախմբումն է։

Հին կրօնականութիւնը, որի իդէալներից մէկն էր ճգնաւորութիւնը և աբեղայութիւնը, ճնշում էր մարդու խոր և անհատականութիւնը և չէր ճանաչում մարդու քաղաքացիական յատկութիւնները։ Նոյն կրօնականութիւնը ստրկացրեց կին մարդուն, չշնելով նրան [illegible]

Անհատի վերաբերեալ ազատութիւնները սրանք են.

Անձի անձեռնմխելիութիւն։

Խօսքի և մտքի ազատութիւն։

Միութիւնների ազատութիւն։

Գործադուլի ազատութիւն։

Այդ չորս հիմնական ազատութիւններից առաջինի վերաբերութեամբ վէճ չը կայ զանազան կուսակցութիւնների մէջ։ Բոլորը կը ցանկանային, որ անձի անձեռնմխելիութիւնը ճանաչվէր իբրև անխախտ մի սկզբունք։

Ինչ վերաբերում է խօսքի և մտքի ազատութեան, այդտեղ մենք տեսնում ենք, որ շատերը տատանվում են և գործնականապէս նրան, իբրև սկզբունք, խախտում են, նոյն իսկ սօցիալ-դեմօկրատների նման բողոքող տարրեր, հենց որ իրանց ձեռքը ընկաւ ազատութիւնը, օրինակ, Թիֆլիսում, արգելեցին մամուլի օրգանների հրատարակութիւնը, բացառութիւն անելով միայն իրանց թերթերի համար։

Նրանք խախտեցին խօսքի ազատութեան սկզբունքը։

Մենք, անկասկած համարում ենք վատնըգալոր մի ճնշում այն կարգադրութիւնը, որ նորերս արվեց Թիֆլիսի լրագիրներից մէկի վերաբերութեամբ։ Լրագրից պահանջեցին, որ նա հինգ օրվայ ընթացքում ապացուցանէ վկայաթղթերով իր առաջ բերած տեղեկութիւնները։ Դա նշանակում էր փակել մամուլի բերանը։ Ի հարկէ գեներալ-նահանգապետը կարող էր առանց այլևայլութեան փակել լրագիրը և հինգ օրվայ [illegible] չը տալ։ Նա մարդասիրութեան մի ակտ ուզեց կատարել։ Բայց մի՞թէ հեշտ էր կատարել նրա պահանջը։ Իսկ եթէ հասարակութիւնն էլ իր կողմից պահանջէր որ ապացուցանեն բանտերում նստածների մեղաւորութիւնը վկայաթղթերով, ո՞վ կարող էր բաւարարութիւն տալ ներկայ պաշտօնեաներից։

Խօսքի, մտքի ազատութեան հետ կապված է խղճի ազատութիւնը, դաւանանքների անձեռնմխելիութիւնը։

Մարդիկ աւելի ևս տատանվում են դառնում, երբ պէտք է պաշտպանել միութիւնների եւ գործադուլների ազատութիւնը։ Վիտտէն բացարձակապէս դէմ խօսեց այդպիսի միութիւններին, երբ հարցը վերաբերում էր պաշտօնեաների միութեան։ Նա օրինակ բերեց Ֆրանսիան։ Իսկ պէտք է ասել, որ այս կրթված երկրում էլ հանգամանքները այնպէս դասաւորվեցին, որ նոյն իսկ սօցիալիստները նպաստեցին մինիստր Րուվիէին աջողեցնելու մի այդպիսի արգելք պաշտօնեաների համար։ Սօցիալիստները այդ արին, որպէս զի Րուվիէի միջոցով կարող լինեն վերջացնել կրօնական կազմակերպութիւնների սահմանափակման հարցը։

Ահա սրանք են այն ազատութիւնները, որոնք պէտք է սրբութեամբ պահպանվեն, որպէս զի մի պետութիւն կարողանայ աջողութեամբ առաջ ընթանալ և լիակատար կերպով զարգացնել իր քաղաքացիական կեանքը։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցան երկար և շատ հետաքրքրական վիճաբանութիւններ։ Սօցիալիստական հռետորները շօշափեցին մի շարք հարցեր, որոնց վերաբերութեամբ տուին բացատրութիւններ սահմանադիր-ռամկավարները—թէ դասախօսը և թէ վէճերի ղեկավարող Ա. Քալանթարը։

Հասարակութեան մէջ նկատելի էր համակրութիւն դէպի սահմանադիր-ռամկավարների ծրագիրը և գործունէութիւնը։

ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱՆԱՉ ՈՒ ԴԵՂԻՆ ԱՖԻՇՆԵՐԻ ԴԷՄ

Սահմանադիր-ռամկավարների ընտրութիւններում տարած յաղթութիւնները արդէն սկսել են Վիտտէի կառավարութեանը սաստիկ անհանգստացնել։ Սկզբներում, երբ այդ յաղթութիւնները մինիստրութեան համար, երևի, շատ էլ հաւատալի չէին թւում,—և ինչպէս կարող էին հաւատալի թւալ, քանի որ մինիստրութիւնը այնքան նախազգուշութիւններ էր ձեռք առել այդ աւելի օպօզիցիայից ազատ մնալու համար,—Վիտտէի օրգան «Русск. Госуд.» թերթը, կարծես թէ սահ.-ռամկավարներին հեգնելու համար, սկսել էր մի տարօրինակ լեզուով խօսել, այնպէս ձևացնելով, թէ ինքը խոնարհվում է ժողովրդի կամքի առաջ և ոչինչ չունի կատարված ընտրութիւնների դէմ։ «Մենք համոզված ենք, ասում է այդ լրագիրը, որ յաղթող օպօզիցիան չը պէտք է կասկածի, որ ինքն է ժողովրդի ցանկութեան իսկական արտայայտիչը ու նրա ձգտումների իրագործողը։ Մենք այդ բանը չենք ժխտում և չենք ցանկանում նախօրօք արտատուրել ընտրութիւնները, թէև դրանց հետևանքները բոլորովին կառավարութեան օգտին չեն։ Մենք միայն թոյլ ենք տալիս մեզ հարցնելու, թէ ապագայում մեր հակառակորդ կուսակցութիւններն էլ այսպիսի կօրրեկտ (!?) վերաբերմունք պէտք է ունենան դէպի մեզ, երբ ժողովուրդը երես դարձնի նրանցից և նորից մեր կողմը անցնի»։

Հեգնութիւնը անկասկած է. Վիտտէ-Դուրնովոյի կառավարութիւնը իր օրգանի միջոցով կօրրեկտ վարմունքի մասին է խօսում!!. Ցիրաւի եփած հաւն էլ կարող է ծիծաղել... Կօրրեկտ վարմունք պահանջելը դեռ բաւական չէ, մինիստրութեան օրգանը իրանց բիւրօկրատական խմբակն էլ, ինչպէս հիւումն է, մի քաղաքական կուսակցութիւն է համարում, երբ ասում է, թէ ապագայում ժողովուրդը կարող է սահմանադ.-ռամկավարներից երես դարձնել և իրանց բիւրօկրատիայի կողմը անցնել նորից։ Հետաքրքիր է իմանալ, թէ ժողովուրդը բիւրօկրատիայի սրած ո՞ր բարիքների համար նորից նրա կողմը պէտք է անցնի։ Իսկապէս վերին աստիճանի պատկերաւոր լինելու է մարդ, որ այդպիսի լեզուով կարողանայ խօսել։

Այդ էլ դեռ բաւական չէ. իր յօդուածի վերջում թերթը մի քանի բարի խորհուրդներ է տալիս «ապագայ մինիստրութեան կուսակցութեանը», այն է՝ որ սրանց հռետօրները պատշաճ և չափաւոր լեզուով խօսեն իրանց հակառակորդների դէմ և բռնի միջոցներ չը գործածեն։ Ամբողջ երկիրը կրակի ու սրի միջից անցկացնող [illegible], հազարաւորներին գնդակահար անողները և ամեն տեսակ չարեաց մայր չարիք եղողները այսօր բռնի միջոցների դէմ են խօսում!!! Ոչ. այսպիսի լեզուով խօսելը հեգնութիւն է միայն և ցինիկ հեգնութիւն, որի իմաստը այսպէս կարելի է թարգմանել՝ դուք, պ. պ. սահ.-ռամկավարներ, նախօրօք մի ուրախանաք ու մի երևակայէք, թէ ընտրութիւններում դուք վերջնական յաղթութիւն պիտի տանէք ու վաղը մինիստրական կուսակցութիւն պիտի դառնաք և ազատվէք մեր ճիրաններից ու սմբակներից։ Ոչ. այդ ձեզ չի յաջողվի։

Մեր այդ ասածը ճշտվում և շատ հաւանական է դառնում, երբ կարդում էք նոյն «Русск. Госуд.» թերթի մի-երկու օրով ուշ լոյս տեսած №-ը։ Այդ ժամանակ արդէն թերթը, կամ աւելի ճիշտ է, մինիստրութիւնը աւելի մանրամասն տեղեկութիւններ է ստացել ընտրութիւնների հետևանքների մասին, որոնք հաստատում են, թէ յիրաւի որ սահ.-ռամկավարները յաղթութիւններ են տանում։ Թերթի տոնը այդ №-ում բոլորովին փոխված է, նա վրդովված ու զայրացած է. «Բաւական է ի չարը գործ դնել «ազատագրական շարժում» խօսքերը,—ասում է Վիտտէի օրգանը,—բաւական են այդ շարժումները և ժամանակն է, վերջապէս, այդ շարժումների կողմնակիցներին հեռացնել ասպարէզից»։

Միևնոյն ժամանակ թերթը չափազանց անբաւական է սահ.-ռամկ. կուսակցութեան դեղին ու կանաչ աֆիշներից, (ընտրողական ագիտացիայի համար տպված աֆիշներն են դրանք), և շատ ցաւում է, որ այդ գոյնի աֆիշները չեն նախատեսնված ընտրութիւնների վերաբերեալ կատարած յանցանքների օրէնքներում։ Օրէնքը պատժում է ընտրութիւններին չը մասնակցելու հրաւիրողներին, բայց պէտք է և պատժէ ընտրութիւններին մասնակցելու հրաւիրողներին։ «Դեղին ու կանաչ աֆիշների բռնապետական ճնշումը այնքան անամօթաբար է կատարվում ընտրողների կամքի վրա,—ասում է ժողովրդի հետ շարունակ զէնքով ու բռնութեամբ խօսող մինիստրութեան թերթը,—որ քիչ է մնում, որ հարկ լինի մի նոր օրէնք հրատարակել, որի հիման վրա կարելի լինի խիստ կերպով պատժի ենթարկել ընտրութիւնների ազատութիւնը խանգարողներին»։

Աչքներս լոյս. կը նշանակէ, շուտով մի նոր օրէնք էլ պիտի ունենանք, և այս անգամ դեղին ու կանաչ աֆիշների դէմ ուղղված։ Բայց արդեօք միայն դեղին ու կանաչ, թէ միւս գոյներն էլ ի նկատի պիտի առնվեն...

Խ.—Ազատ

ԿՈՄՍ ԿԱՆՑԼԵՐԸ ՉԷ ՎՀԱՏՈՒՄ

Չը նայելով ընտրութիւններում կրած իր պարտութիւններին, Վիտտէի կառավարութիւնը բոլորովին չէ վհատվում և ամենաեռանդուն կերպով աշխատում է անպատճառ մի խոշոր փոխառութիւն ձեռք բերել արտասահմանում, և այն էլ Պետական Դումայի գումարվելուց առաջ, նրանից միանգամայն անկախ, որպէս զի աւելի մեծ համարձակութեամբ և բոլորովին անկաշկանդ ձեռքերով կարողանայ պատերազմ մղել նոյն իր հնարած դումայի դէմ։ Քանի որ կոմս պրեմիէրը, վստահանալով իր պաշտօնակից Դուրնօվօյի ձեռք առած նախազգուշական հանճարեղ միջոցների վրա, հաւատացած էր, թէ դուման օտարների աչքին թոյլ փչող մի կատակերգութիւն և իր ամբողջ քաղաքականութիւնը վաւերացնող մի խորհրդակցական մարմին պէտք է լինի, գուցէ նա շատ էլ չէր շտապում փոխառութիւնը գլուխ բերելու, մտածելով որ դա վաղ թէ ուշ կը լինի և այն էլ աւելի նպաստաւոր պայմաններով։ Բայց այն օրվանից, երբ կոմսը նկատեց, որ ընտրութիւնները իր սպասածի ճիշտ հակառակ ընթացքն են ստանում և, կասկածելով, թէ մի գուցէ, հակառակ բոլոր հրատարակված «օրէնքների» ու «կանոնների», այս գումարուելիք անդրանիկ դուման յանկարծ ինքն իրան սահմանադիր ժողով հրատարակէ ու մի հարուածով ոչնչացնէ այդ Վիտտէ-Դուրնօվօյական բոլոր օրէնքները և սկսէ անել այն, ինչից այնքան միշտ վախենում և պզուշանում էր կառավարութիւնը։ Այս պարագայում, ի հարկէ, կառավարութիւնն էլ գտնվելով ֆինանսական ամենանեղ դրութեան մէջ, ուզէր-չուզէր, ստիպված պէտք է լինէր անձնատուր լինելու և կամ անպայման զիջողութիւններ անելու, մի բան, որ բոլորովին կոմս Վիտտէի ծրագրի մէջ չը կայ։ Նա մտածում է՝ «ոչ թէ կառավարութիւնն է Ռուսաստանի համար, այլ Ռուսաստանն է կառավարութեան համար. թող քանդվի, քայքայվի, աւերակ դառնայ երկիրը, թող ժողովուրդը սովամահ լինի, պարտքերի մէջ խրվի, ծանր ու անպատուաբեր տոկոսներով բեռնաւորվի, թող թէկուզ նրա կէսը բնաջինջ լինի, միայն թէ կառավարութիւնը, բիւրօկրատական կառավարութիւնը մնայ կանգուն իր ամբողջ կազմով ու ինքնիշխան իրաւունքներով։»

Ահա այսպիսի սկզբունքներով առաջնորդված մեր հռչակաւոր պետական կանցլերը, ընտրութիւնների [illegible] հետևանքները նկատելուն պէս, փոխանակ վհատվելու կամ թուլանալու, աւելի ևս զգաստացաւ և եռապատկեց իր բանակցութիւնները փոխառութեան մասին, մի փոխառութիւն, որը պէտք է ամբողջապէս ծառայէ երկրի պատերազմական դրութիւնը շարունակելու ծախսերին և Պետական Դումայի դէմ պատերազմ մղելու համար։ Եւ ինչպէս մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, այս անգամ կոմսի ջանքերը ապարդիւն չեն անցնում. ֆրանսիական բանկիրները խոստանում են փոխառութիւն տալ և այն էլ մի խոշոր փոխառութիւն։

Առաջին անգամից սա միանգամայն անհաւատալի է թւում. չէ՞ որ քանիցս անգամ ֆրանսիացիք ասել էին, որ միապետական կառավարութեանը այլ ևս չեն ուզում դրամ տալ, այլ կը տան այն ժամանակ, երբ արդէն Ռուսաստանում Պետական Դուման գումարված կը լինի և իրանք գործ կունենան սահմանադրական կառավարութեան հետ։ Արդ ինչպէս է պատահում, որ հիմա նրանք դրամ են ուզում տալ դեռ դուման չը գումարված ու դումայից բոլորովին անկախ ճանապարհով։ Կրկնում ենք, առաջին անգամից սա շատ զարմանալի ու միանգամայն անհաւատալի է թւում, սակայն երբ փոքր ինչ մտածում ենք, թէ ինչ [illegible] ղեկավարվում փող ունող բանկիր բուրժուան, այն ժամանակ տեսնում էք, որ զարմանալի ու անհաւատալի ոչինչ չը կայ։ Եւ յիրաւի, բուրժուային հետաքրքրող միակ բանը իր դրամի տոկոսներն են. նրան բոլորովին չէ հետաքրքրում, թէ ինչ ռէժիմով է կառավարվում այն երկիրը, որին ինքը փոխառութիւն պէտք է տայ։ Եթէ կուզէք, նա նոյն իսկ շատ անգամ աւելի գերադասում է իր դրամը տալ Թիւրքիայի նման քայքայված երկրներին, որտեղ թէև րիսկը աւելի մեծ է լինում, բայց ապահովութեան գարանտիան ու տոկոսներն էլ մեծ են լինում։ Բանկիր բուրժուայի համար ամենագլխաւորը գարանտիան տոկոսներն են, ինչ ֆրանսիական բանկիրները ամենայն առատութեամբ, անշուշտ, կը ստանան Վիտտէից և սա էլ սիրով կը տայ նրանց։ Թող այդ գարանտիայի պայմանները քայքայիչ լինեն Ռուսաստանի համար, թող նշանակված տոկոսները անպատւաբեր ու նուաստացուցիչ լինեն առա ժողովրդի համար,—ինչ փոյթ եւրոպական կապիտալիստներին և մանաւանդ ինչ փոյթ միապետական բիւրօկրատիային...

Ռ.

ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ

IV

Վերջին «բունտի» վախճանը.—Ճեմարանում դարձեալ «խաղաղութիւն» է տիրում։ Վարնդվելու ամեն րոպէ պատրաստ հեռանկարը, պարբերական դարձած բունտումներից այս վերջինն էլ խաղաղվեց մի շարքած յուղելով աշակերտութիւնը։ Արդէն յայտնել եմ, որ ճեմարանի վարչութիւնը իսկոյն, աշակերտների գործադուլի օրը, ըստ սովորութեան և ըստ պատշաճի դիմեց Վեհափառ Հայրապետին և թոյլատւութիւն ստանալով ուսումնական տարին վերջացրեց... Այսինքն աշակերտների ձեռքից ճարպիկութեամբ նրանց բողոքելու միակ զէնքը—գործադուլը խլեց ինքը՝ դադարեցնելով դասերը, որպէսզի հնարաւորութիւն չունենան բողոքելու։

Ապա միջոցներ ձեռք առաւ անմիջապէս աշակերտներին տները ցրելու։ Եւ որպէսզի սարսափահար անելու այս միջոցի ապաւորութիւնը զօրեղ լինի՝ նա աշակերտներին միայն մի երկտողով պատասխան տուեց, թէ տարին վերջացած է, ցրվեցէք տները, առանց որ և է հաշուետւութեան։ Այնպէս որ աշակերտութիւնը շշմած մնաց այս հարցի առաջ—ինչպէ՞ս, և, խաղաղվեց։ Եթէ տարին կանոնաւոր վերջացաւ, ինչպէս քարոզում են, ո՞ւր են վկայականները և հենց կանոնաւոր քննութիւնները։ Առաջինները չը կան, իսկ քննութիւն տուողներին ասված է. ով ուզում է քննութիւն տալ՝ թող գայ յայտնի—կը քննենք։ Այս ինչ ձև է։

Գոնէ ինձ համար շատ պարզ է այս բոլորը։

Եականն այն է, որ Գարեգին վ. այսպիսով հասաւ իր նպատակին. ճեմարանի կեանքից երևակայական թշթից աշակերտը արդէն վռնդված է, աշակերտութիւնն էլ «խաղաղ»։

Իբրև վերջին անճար միջոց՝ աշակերտութիւնը մի խնդիր է տուել Վեհ. Հայրապետին, որ իրանց ընկերոջ գործը քննվի և աշակերտներին արձակելու ձևը պարզվի։ Աշակերտներին պատասխանել են, որ վկայականների մասին կարգադրութիւն կը լինի, քննութիւն տուողները (Զ. դ-ից—Գ լս.)—կը տան, իսկ յանցաւոր աշակերտը կը հեռանայ ճեմարանից մինչև նրա գործի քննութիւնը։

Հ. տեսուչը վերջին անգամ աշակերտներին ասել է.—Դուք խնդիր էք տուել Վեհափառին այն աշակերտի մասին։ Ես այդ իմացայ։ Նորից կրկնում եմ, որ այդ տղան արձակված է մանկավարժական ժողովի որոշմամբ։ Եթէ դուք փաստեր ունէք՝ կարող էք գալ և ինձ յայտնել։

Այս ինչպէ՞ս է. առաջ աշակերտութիւնն էր արձակման փաստեր պահանջում հ. տեսչից, իսկ այժմ նա—աշակերտներից։

Պէտք է ասեմ, որ ճեմարանի աշակերտութիւնը ամենապակասն եղաւ այս տարվայ դպրոցական խլրտումների մէջ։ Նա ոչ մի իրաւունք ձեռք չը բերեց։ Երևի սրա պատճառներից է և այն, որ այդ աշակերտութիւնը մի չը տեսնված խառնուրդ է կազմում, և որը ընդհանրապէս շահասէր է ու մտավախ և ակտիւ գործունէութեան անընդունակ։ Եթէ նա գոնէ մէկը ձեռք բերէր իր անվերջ պահանջներից—ընկերական դատարանը,—ապա նման դէպքերին վերջ դնելով խիստ՝ կազատվէր այդ զզուելի երևոյթից և իրանց մի անմեղ ընկերոջը վարդապետական անհեռատեսութեան ու քմահաճոյքի և [illegible] թիւրիմացութեան զոհ չէին դարձնի։

Մնում է սպասել Գարեգին վ.-ի բացատրութեան։

Վ. Սիրտ

ՀԱՅԵՐԻ ԵՒ ԱԲԽԱԶՆԵՐԻ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՍՈՒԽՈՒՄՈՒՄ

Ծէլէբդա, 30 մարտի

Ամսիս 24-ին Սուխում գնացինք Ծէլէբդայի ցաւերին դարման անելու և ականատես եղանք մի յուզիչ դէպքի։ Ժամը ցերեկվայ 11-ն էր. յանկարծ լսվեցին ատրճանակի մի քանի հարուածներ միմեանց ետևից. ժողովուրդը սկսեց իրար անցնել. բոլորն էլ փախչող փախչողի եղան։ Շուտով եղելութիւնը պարզվեց. Շարվանի պահակախմբից մի աբխազ էր սպանվել. ասացին սպանողը հայ է, ուրեմն ամեն ինչ վերջացել էր. բաւական էր, որ իմացվեց, թէ որ և է հայի ձեռքով է կատարվել, այլ ևս իմանալու կարիք չը կայ, թէ ինչ հանգամանքներում է կատարվել։

Թէ ինչպիսի ենթադրութիւններ կան այդ դէպքի մասին, այստեղ չենք թւում, միայն եղելութիւնը այսպէս է։ Երեք միլիցիոնականները վերցնում են այդ կարծեցեալ հային և տանում մտնում են «Տրանսվալյ» հիւրանոցը, խմում և հարբում են. յետոյ նստում են կառք, սկսում են օդի մէջ ատրճանակ արձակել։ Իրար դէմ նստած կրակելիս, գնդակը դիպչում է աբխազի գլխին և տեղնուտեղը մահացնում. հայը սկսում է կամաց-կամաց հեռանալ, իսկ սպանվողի ընկերները ոչ կրակում են հայի վրա, ոչ էլ բռնելու լուրջ միջոցների դիմում։ Սպանողը հեռանում է և պատսպարվում։ Այստեղ զարմանալին այն է, թէ ինչու միջոցների չեն դիմում [illegible] համար և ձեռքից փախցնում են չարագործին. այս բանը մի քիչ կասկածելի է։

Տասը րոպէ յետոյ, Շարվանը, իր ամբողջ սանկիւլօտների կազմով, եկաւ դէպքի տեղը. փրփուրը բերանին, սկսեց իր կատաղի թուրը թափել հայերի գլխին։ Հայերդ էք սպանողը, ձեզ բոլորիդ էլ պէտք է կոտորեմ. տուէք այդ հային, շուտ արէք, եթէ ուզում էք ապրել, այսպէս էր մրթմրթում նա։ Յետոյ հաւաքեց բոլոր քիչ ու շատ աչքի ընկնող հայերին, լցրեց Եղիա Քոսեանի խանութը և իր պահակախմբի մարդկանց մի մասը, փամփուշտները հրացանների մէջ դրած, դէմ տուեց հայերի կրծքին.—Տուէք սպանողին, եթէ ոչ ահա բոլորիդ էլ կը կոտորեմ։

Դժուար չէ ընթերցողի համար երևակայել, թէ ինչպիսի սարսափ պէտք է տիրէր այդ մի բուռն հայերին 4 պատերի մէջ՝ այն գազանի ձեռքում, որոնք մեղաւոր էին միմիայն նրանով, որ դժբախտութիւն էին ունեցել հայ ծնվելու։ Հայերից մէկը քաջութիւն ունեցաւ համարձակութիւն ստանալ և 4 ժամ ժամանակ խնդրել, և այդպիսով ազատվեցան գնացին իշխան Ջանդիէրիի մօտ, որը պահանջում է հային յանձնել, հենց գիտենալով հանդերձ, որ այդ հայը քաղաքից փախել անհետացել է։ Հայերը պատասխանում են, որ չեն կարող խոստանալ անպատճառ գտնել, բայց կարող են աջակցութիւն ցոյց տալ՝ գտնելով և մատնելով հետքերը։ Հայերի խնդրանքին, թէ պէտք է զսպել Շարվանի պահակներին, որ կոտորած չառաջացնեն Սուխումում, իշ. Ջանդիէրին պատասխանում է, որ այդպիսի բան չէ կարող լինել։ Այսպիսով վերջացաւ դրամայի առաջին գործողութիւնը։ Դրանից յետոյ, մինչև ամսի 27-ը, բացի անընդհատ սպառնալիքից, Շարվանի կողմից ոչ մի դէպք տեղի չունեցաւ և ամեն ինչ խաղաղ էր։

27-ին, երեկոյեան ժամը 4-ին ոստիկանապետը հայերից մի քանիսին կանչեց և ասաց.—Վերջապէս գտէք այդ մարդուն, տեսնում էք, որ աբխազները վայրենի, բարբարոս ժողովուրդ են, չէ կարելի նրանց զսպել։ Ցիշեալ խօսքերը, որ միմիայն կարող էին խրախուսելու նպատակ ունենալ, ոչ թէ ամօթանք են պատճառում, այլ նրանց աւելի համարձակ են դարձնում. և նրանցից մէկը հայերի այդ տեղից դուրս գալուց յետոյ, մօտենում է նրանցից մէկին, բռնում օձիքից և, ատրճանակը դէմ տալով կրծքին, պահանջում սպանողին, եթէ ոչ...

Հայերը վերադարձան թէ չէ, աբխազներն էլ, շատ չանցած, ինկան մտան մի քանիսը «Տրանսվալյ» հիւրանոցը, սկսեցին պատառոտել պատկերները և սեղանները կոտրատել, մարդկանց ծեծել հրացանի կոթերով, որի գլուխը պատռվեց, որի քթից արիւնը սկսեց հոսել։ Ցոյներից և Թուրքերից էլ մարդիկ ծեծ կերան այդ գաղանացած սանկիւլօտներից. սըրանց կարմրած աչքերը հային Թուրքից և յոյնից չէին կարողանում ջոկել։ Սկզբին աջ ու ձախ կրակել, բայց բարեբախտաբար մարդկային զոհեր չկան։ Հայերը նրանց կրակին չէին պատասխանում։ Աբխազների մի մասն էլ խուզարկում էր սրճարաններում փոքր արկղները չարագործին գտնելու համար։

Հայերը շուտով լուր տուին գաւառապետին, որը անձամբ եկաւ դէպքի տեղը. շնորհիւ նրա ձեռք առած խիստ միջոցների, շուտով ցրւեցին ցուցարարներին և մի քանիսին ձերբակալեցին և բանտ դրին. Նրանց գլխաւոր Շարվանը ազատ է։

Այսպիսով երկրորդ անգամ էլ ազատւեցին կոտորածից, բայց վերջը ինչպէս է լինելու, այդ ապագան ցոյց կը տայ։ Միայն յայտնի է, որ մութ անձնաւորութիւններ աշխատում են վարակւած սերմեր ցանել։ Միթէ այնքան ախորժելի է հայի արիւնը, որ մի տարւանից աւելի է ծծում են և չեն կշտանում։

Դէպքի տեղը հասաւ վերջը նաև ոստիկանապետը, միասը գնահատեց 50 ր. և խոստացաւ շուտով վճարել, բաւարարութիւն տալ տիրոջը։

Որովհետև ընթերցողը կարող է թէր և դէմ կարծիք կազմել աբխազ-հայկական ընդհարում և յարաբերութիւն ասելով, դրա համար կարևոր ենք համարում պարզել ընթերցողին այդ մասին։ Աբխազը գող է, այս բառի բուն իմաստով. նա գողանում է նոյն իսկ առանց իմանալու և գնահատելու գողացածի արժէքը, թէ բարեկամից և թէ դրացուց. գողութիւնը նրանց համար, կարծես, մի տեսակ պարտադիր բան է. ամօթով է մնում այն աբխազը, որ չէ կարողանում գողանալ, և այդ արհեստի մէջ աջողակը, ի հարկէ, աւելի պատւաւոր է լինում նրանց մէջ։ Եւ այս է պատճառը, որ նրանք գողութեան համար չեն դիմում այնպիսի խիստ միջոցների, ինչպէս հայերն են անում. և շատ անգամ հայերին մեղադրում են իբրև խիստ մարդկանց, որոնք անխնայ գնդակահարում են այդ գողերին. Նոյնը կարելի է ասել նաև մինգրէլների վերաբերմամբ, որոնք գողութեան արհեստի մէջ պակաս զարգացած չեն. սրանք երևում է միևնոյն «կալիբրայի» մարդիկ են։

Իսկ ինչ վերաբերում է այն բարբարոսական ոգուն, որ արմատացել է թուրք և թաթար (մեր խօսքը շիանների մասին է) ցեղերի մէջ, մենք նոյնը չենք գտնում խոշոր ծաւալով իբրև Աստւած պաշտող մահմեդական աբխազների մէջ. սրանց մէջ կայ մարդկային ոգի, փափուկ սիրտ, որ երբեք չէ կարելի նրանց դասել հայկական արեան ծարաւ թուրքերի հետ։ Եւ եթէ այս ցեղի երակների մէջ հոսէր իրանց կրօնակիցների արեան նման արիւն, Սուխումի շրջանը մինչև այժմ ոռոգւած կը լինէր, եթէ ոչ հայի, գոնէ մինգրէլի արիւնով, որովհետև սկսեցին առաջ վերջիններիս դէմ գրգռել աբխազներին։

Շուտով կազմւեց աբխազներից մի պահակախումբ, որի նպատակը աւելի յեղափոխութիւն զսպելն էր, քան թէ աւազակներին. այդ խմբի մէջ մտան Սուխումի շրջանի եթէ ոչ բոլոր աւազակները, գոնէ նրանց մի մասը։ Եթէ վերջերս մենք, հայերս, սարսափի մէջ ենք, ընթերցողը թող չը հասկանայ, թէ մեր վրայ յարձակումներ են գործում աբխազ բնակչութեան կողմից.—ոչ, ընդհակառակը, մեզ վրայ յարձակւում է այդ պահակախումբը, որի մէջ կան նաև մինգրէլներ, և այդ մինգրէլներից մէկը շատ ու շատ աւելի անգութ էր վարւում, քան թէ իր միւս աբխազ ընկերները։ Այստեղ կարող ենք աւելացնել, որ այդ պահակախումբը ոչ միայն աւելորդ, այլ և վնասակար է. նոյն իսկ այդ մարդկանցից մի քանիսը տուներ են կողոպտել և բռնաբարել։ Ի՞նչ պէտք է ասէր հասարակական կարծիքը, եթէ տեղի ունենար կոտորած։ Որպէս զի թէր ու դէմ կարծիքի տեղիք չը տալ, պէտք է կազմալուծել Շարվանի խումբը։

Ա.

ՈՒՐ Է ԹԱՂՎԱԾ ՇԱՆ ԳԼՈՒԽԸ

Երբ մարդ գրիչ է ձեռք առնում օրւայ հրատապ խնդրի վրայ գրելու, մտածում է թէ արդեօք աւելի բարենպաստ չէ՞ լինել հաշտութիւն բերելու միջոցների ետևից ման գալ՝ քան մեզ տառապեցնող չարիքի պատճառները քրքրելու, գտնելու հետամուտ. մի բաւիղ, մի լաբիրինթ՝ ուր մտնելով յաճախ է պատահում մոլորվելը քան իսկական աւարը գտած այնտեղից լոյս աշխարհ վերադառնալը։ Եւ վերջապէս ինչ օգուտ կրակն այդպէս խառնելուց և շարունակ թէժացնելուց։ Բաւ չէ՞ արդեօք ինչ լափեց նա տուն ու տեղ, կեանք ու կայանք. մոխրակոյտի վերածեց ամբողջ շէներ, խանձեց քաղաքներ և դեռ էլի բոցեղէն լեզուները շչելով ու շառաչելով լափլիզում են մեր լեռների վրայ ու մեր հովիտներում կեանքն ու գոյքը, արարքն ու տնտեսական բարեկեցութիւնը։ Ջուր է պէտք և ոչ իւղ. հող՝ այդ կրակը տալով անելու, խեղդելու, և ոչ թէ խոիւ։

Այդ մտածողութիւնն է պատահած տեսնում իր աչքի առաջ՝ ձեռքը գրչին տանողը։ Հաշտութեան միջոցների ետևից գնալ՝ թէ չարիքի պատճառները դեռ խուզարկել։

Հարկաւ հաշտութիւնն է սիրելին. նա է փրկիչը. եօթներանգեան գոյն ունի նա. ծիածան է իր անունը, ծիրանի գօտի, որ կամար է կապում երկինքի կապոյտի վրայ՝ երբ Եհովան ողորմածում է հեղեղաբեր մրրիկը և յափշտակւած խաղաղութիւնը վերադարձնում է փոքր առաջ չարաչար ամբոխւած տարերքների ծոցը։ Պաշտելի է հաշտութիւնը։

Ո՞վ ինչ կասէ։ Պաշտելի է հաշտութիւնը։ Ո՞ւր է սակայն հաշտարարը, ո՞ւր դատաւորը, ո՞ւր իրաւարարը։ Սուինի ծայրում որոնենք այն, թէ [illegible] գնդակի պորտում։

Բայց դա եօթնգոյնեան նարօտի անխռով հաշտութիւնը չէ. դրա ծագումն երկինքից չէ. դա մեղաւորին և արդարին մի սիւնի վրայ է կապում. և հարցրէք թէ ինչո՞ւ գնդակը բաց թողնելիս՝ սա աւելի զրկւածին է կպչում և ոչ զրկողին։

Հաշտութիւնը խրովի կը գայ՝ երբ անիրաւ կողմը իր մեղքը վիզը կ'առնէ իրաւաւորի առաջ. կամ երբ երկսի միջև հաշտարար յայտնւող դատաւորը անաչառ քննութիւնից ըղձած իր արդար վճիռը կը կարդայ և կը պարտաւորէ մեղաւորին վնասը հատուցանել անմեղին և կամ գէթ բարոյապէս հատուցանել վնասը, եթէ նա նիւթապէս անկարող է, խոստովանելով իր մեղքը և ներողութիւն խնդրելով զրկւածից։ Եթէ դատաւորը այդ անաչառութեան և արդարադատութեան հանգամանքը չունի ու մեղադրական մի անուրի, մի օղակի մէջ առնելով թէ զրկողի և թէ զրկւածի պարանոցը՝ կը ստիպէ վերջինիս հաշտւել առաջինի հետ, նա այդ դէպքում մի բռնաւոր դեր կը ներկայանայ, որից օգտւած դուրս կը գայ զրկողը և որին առ անճարութեան կը հպատակւի և զրկւածը ու կը հեռանայ՝ բայց առանց ծիածանի գոտարիկ նշոյլներից մի կաթ անգամ ընկած զգալու իր կարեվէր սրտի մէջ։

Զրկւածի կողմից այդպիսի հաշտութիւնը կը համարւի մի ակամայ զինադուլ։ Եւ կրակը, այդ դէպքում, մոխրի տակ կը մտնէ անթեղւած։ Կը գայ բոլէն, կը շնչէ հողմը, կը վերանայ աճիւնը և տակիցը նորից ցոլք կ'արձակեն կայծերը։

Ո՛չ. մեր փափագածը հաշտութիւն է։ Բայց մենք դռները այդ կողմի վրայ փակած ենք տեսնում, քանի որ բացայայտ երևում է թըշնամու կողմից իր սև արարքի մեղքը մեր վրայ շրջելը և դատաւոր կոչւածի էլ ակնյայտնի միտումները, որոնք մեզ արդարութիւն գտնելու յոյսը չեն ներշնչում։

Այդպէս, տեղիք չի մնում կասկածի, որ Գորդեան հանգոյցը ահա թրով են խզում։ Խզում են և ոչ լուծում։

Մեղաւորը շատ լիրբ երեսով քիչ է համարում իր մեղքի պատճառը. դատաւորը, որ մեղաւորին իրանից զժգոհ չը թողնելու ակնբեր ձգտումն ունի, ելքի ճանապարհն այն է գտնում, որ առանց հաստ ու բարակի, անպարտին էլ պարտաւորի հետ մի ստորճանի վրայ դնելով և հաւասարապէս յանդիմանելով, չենք ասում հայհոյելով, հարկադրում է որ իրար ձեռք մեկնեն ու քաշւեն գնան՝ խաղաղ ապրեն։ Կարծես փողոցում բռունցքով իրար վրայ ընկած երկու սրիկաների են իրարից բաժանում։

Իմացողները կիմանան, զգացողները կը զգան՝ թէ որքան բանաւոր, արդար ու գնահատելի է այդպիսի մի խաղաղարարութիւն, և թէ այդպէս կնքւած հաշտութիւնը ինչքան արժէք կարող է ունենալ։

Երբ մարդ, խիստ հարկի տակ, անկարող է տեսնում իրան իր բաղդի տնօրէնը լինելու, նա բաղդին իրան է թողնում անելիքը։ Ճիշտ այդպէս՝ թանձր բքով մոլորված ճիւաւորը երասանակը բաց է թողնում ձեռքից և իր անմոլորի բնազդին է ապաւինում՝ տանել հասնել նրան մի կայան։

Մենք այժմ կոյր բաղդին կամ, աւելի ճիշտն ասած, աչքին կապ դրած բաղդ աստուածին ենք անձնատուր եղած՝ որ մեզ պատահեցնէ մի կայանի։ Թէ ուր կը մթնէ օրը մեր վրայ, մենք այդ չը գիտենք. այդ առայժմ բաղդի գիտենալիքն է։ Բայց թէ ինչո՞ւ ընկանք մենք այս օրը, այդ մեր քննելիքն է։

Ինչու ընկանք մենք այս օրը. ինչո՞ւ այս և այն կողմից այս հալածանքը մեր վրայ։

Ինչո՞ւ մեր կեանքը, մեր գոյքը, մեր պատիւը, մինչև իսկ մեր հաւատը ազատ և անպատիժ աւարի նիւթ են դարձել։

Ինչո՞ւ մեր մանկամարդ կանանց և աղջիկներին առևանգում են և հարեմական որջերը տանում։

Այդքանը և աւելի քան այդ կատարւեց ու դեռ կատարւում է մեր մի քաղաքական յանցանքը կամ հարստահարչական անզուսպ ընչաքաղցութիւնը պատժելու, մեր ըմբոստական ձգտումները սանձելու, կամ գուցէ մեր ուրիշի սեփականութիւնն ու իրաւունքները յափշտակելու ախորժակը մեղմելու։

Եւ ո՞րպիսի գործիք է մեզ պատժելու համար ընտրւածը։

[illegible] որ այդպիսիքդ կաք,—նահապետական արևելեան ազատարի և բարենոյթ մարդիկ, խնկան Ալլահին խիկապէս հաւատացող բարեպաշտ երկրպագուներ, ո՛վ ամենքդ, որոնց կուրծքը ուրիշական փառահեղ մօրուքն է փառազարդում, առաջեք, առաջեք աւազակախումբ լէգէոններին, որ պատժի այդպիսի գործիքը սատանաների դարբնոցն է դժոխքի սալի վրայ։

Իսկ մենք քննենք թէ որտեղից փրթաւ մեր գլխին այսքան փորձութիւն, կամ, ժողովրդին ասելով, փնտռենք թէ՝ Ուր է թաղւած՝ շան գլուխը։

Ա. Մ. Եզեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, ապրիլի 6-ին, մօտաւորապէս ժամի 10½-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ հետևեալ դէպքը, որ մեծ իրարանցում պցեց Դւորցովայա փողոցում։ [illegible] փոխադարձ կրեդիտի բանկում պայթեց մի ռումբ, որից սպանւեցին նախագահ Գունդիևը և Մօլշովին, վիրաւորւեցին մի գանձապահ, մի մշակ և մի հրեայ։ Պայթիւնից առաջացած շփոթի ժամանակ գողացւել են բանկի առձեռն դրամ 7000 րուբլի և արժէթղթեր տասն և երկու հազար րուբլու։ Ոստիկանութիւնը իսկոյն շրջապատեց տունը, սկսեց խուզարկել։ Դէպքի եղելութեան տեղը շտապեցին գեներալ-նահանգապետը, ոստիկանութիւնը և ուրիշ պաշտօնեաներ։ Խանութները իսկոյն փակւեցին։ Ելէքտրաքարշը իսկոյն ընդհատեց իր շարժումը։ Պայթիւն առաջացնողները և կողոպուտ կատարողները դեռ չեն յայտնւած։

—

Ռուսաստանում ոստիկանութեան նոր շտատ կազմելու համար, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, յատկացւած է 3,469,600 րուբլի։

—

Գանձակից հեռագրում են «Т. Л.»-ին, որ Ասլանդուզակի գունդը հրաման է ստացել Շուշի տեղափոխւելու։

—

Կովկասեան ոստիկանութեան կառավարիչ գեներալ-լէյտ. Շիրինկինը ուղևորւել է Թիֆլիսից դէպի Պետերբուրգ։

—

Թիֆլիսի սահմանադիր-ռամկավար կուսակցութեան բիւրօն որոշել է ներկայացուցիչ ուղարկել կուսակցութեան առաջիկայ երրորդ պատգամաւորական համագումարին մասնակցելու, որը կայանալու է Պետերբուրգում ապրիլի 21-ին։ Համագումարի մէջ քննւելու են կուսակցութեան տակտիկայի վերաբերեալ հարցերը, որ կապ ունեն Պետական Դումայի գումարման հետ։

—

Թիֆլիս քաղաքի և նրա նահանգի բանւորական լիազօրների ընտրութիւնները նշանակւած են ապրիլի 16-ին, իսկ նոյն ընտրական շրջանի մէջ մտնող գիւղերի և գաւառների գաւառական լիազօրների ընտրութիւնները՝ ապրիլի 23-ին, գաւառապետների որոշած գիւղերում յիշեալ գիւղերի ստարշինաների նախագահութեամբ։

—

Կովկասեան Փոխարքայի յայտնած կարծիքի համաձայն, Ներքին գործերի մինիստրը հնարաւոր համարեց Շամախի քաղաքի անշարժ սեփականութիւն ունեցողներին, որոնք թէև ժամանակաւորապէս ազատւած են տուրքերից, բայց օրէնքով վճարող են համարւում, մտցնել ընտրողական ցուցակների մէջ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու։

—

Շաբաթ օր, ապրիլի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին, կովկասեան իրաւաբանական ընկերութեան սրահում (Թիֆլիսի նահանգական դատարանի շինութեան մէջ), իշխ. Դ. Մ. Թումանովը կարդալու է մի ռեֆերատ Պետական Դումայի նշանակութեան մասին Կովկասի համար։ Պ. ռեֆերենտը քննելու է սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ծրագիրը կովկասեան շահերի տեսակէտից։ Մուտքը ձրի է։

—

Աղէտեալների օգտին ստացել ենք. 1, Բաշուշարից—Զ. Նազարեանից 6 ր., Ա. Առաքելեանից 1 ր., և Յ. Սաառնեանից 1 րուբլի, 2, Բաքւանի կայարանից — հայ ապերանից 70 ր., 3, Բագուից — Խաչամիրեանի միջոցով 15 ր., 4, Նոյն տեղից— անյայտից 10 ր., 5, Ղզլարեցի Խաչատուր Ղալումեանցի մահւան առթիւ, նրա որդկերանցից, հոգեհացի փոխարէն 100 ր., 6, Րիպին քաղաքից—մի ոմն անյայտից 1 ր., 7, Ղարսից Մամբրէ վարդապետից յունվար-ապրիլ ամիսների ռոճկի 3%—10 ր., 8, Պետրո-Ալէքսանդրովսկուց—հայ գաղութից Սաֆարեանի միջոցով 57 ր., 9, Բագուից Վաղինակ Մելիքսեդեկեանից մարտի ամսաճար 5 ր., 10, Թէլաւից—գործակալ Աբէլ քահանայ Սուքիասեանի միջոցով 69 ր., 11, Սամարից եղբ. Աւանէսեաններից 50 ր., 12, Թիրմէդից—տեղական կանանց խմբից 30 ր., 13, Դուշակից—Յակոբ Ղազիեանցի միջոցով Զատկի տօնի սեղանի փոխարէն ժողոված 21 ր., 14, Մերվից—տ. Աննա Արսեմեանի միջոցով Ջրօրհնեաց գիշերը ժողոված 69 ր., 15, Ղզլարից—Լ. Տէր-Կարապետեանի միջոցով տեղական եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների ուսուցչաց ռոճիկներէն 2%—31 ր., 16, Կիևից—Մարիամ Մատուրեանից 50 ր., 17, Դուրովկից—Թ. Մարգարեանից ապրիլ, մայիս և յունիս ամիսների վճար 30 ր.։

—

Զատկական տօնին աղքատներին բաժանելու համար ստացել ենք՝ 1, Շորապանում Մ. Ազատեանի ձեռքով հաւաքած 12 ր. 20 կ. 2, Ա. Խ-ից 5 ր., 3, Մատթէոսեանից (Երևան) 3 ր., 4, Մի ոմնից (Րիպին) 3 ր., 5, Բալախանից Միրզոյեանի բանւորներից 10 ր., 6, Բալախանից «Կասպեան» ընկ. բանւորներից 11 րուբլի։

—

Կիրակի, ապրիլի 9-ին Արտիստական թատրոնում կը կայանայ գրական-երաժշտական երեկոյթ՝ յօգուտ Զանգեզուրի գաւառում վնասւած հայերի։

—

Ինչպէս լսում ենք, Բագւի գեներալ-նահանգապետը թոյլատրել է Շամախու քաղաքային [illegible] Շամախի քաղաքում ձրի ընթերցարան մուսուլմանների համար։ Ընթերցարանը բացւելու է մօտ օրերում։

—

Մարտի 27-ին, 3-րդ իգական գիմնազիայի կից կայացաւ կրկնողական դասարանների բացումը, որը ծնողական շրջանի նախաձեռնութեամբ հիմնւում է թոյլ աշակերտուհիներին օգնելու համար։ Ծնողական շրջանի խորհուրդը յիշեալ դասարանների կառավարիչ է ընտրել տ. Օ. Վ. Մատուրեանին, իսկ աշակերտուհիների հետ պարապելու համար հրաւիրւած են 3 վարժուհիներ ռուսերէն լեզուի, թւաբանութեան, պատմութեան և՝ աշխարհագրութեան համար։ Բացի դրանից ձրի դասաւանդելու համաձայնւել են կրօնից Տէր-Ղևոնդեան քահանան և ֆիզիկայից Լ. Թուսիկեանցը։ Դասընթացի համար առ այժմ գրւել են 22 աշակերտուհիներ։ Ուսման վճարը բոլոր առարկաների համար նշանակւած է 3-ական րուբլի։

—

Ներքին գործերի մինիստրի հրահանգի համաձայն, Թիֆլիսի նահանգապետը խնդրում է քաղաքային վարչութեանը միջոցներ ձեռք առնել քաղաքից հասանելիք մի քանի անհրաժեշտ ծախսերի համար յատկացւած նպաստները իր ժամանակին գանձարանին յանձնելու համար։

—

Թիֆլիսում նոր հրատարակութիւնների համար խնդրամատոյց են եղել. 1) Սլավա Գրիգ. Օստրովսկայա ռուսերէն շաբաթաթերթ «Встань спящій» անունով, Իոան Բրիխնիչեվ քահանայի խմբագրութեամբ. 2) վրաց գիմնազիայի ուսուցիչ Սէիդ Նաշվիլի ռուսերէն լեզւով ամենօրեայ թերթ՝ «Весенній Потокъ» անունով. 3) Թիֆլիսի վրաց գիմնազիայի ուսուցիչ Ախմետելով վրացերէն լեզւով ամենօրեայ թերթ՝ «Ախալի Ցխովրեբա» (Նոր կեանք) անունով։

—

Մարտ ամսւայ վերջին 10 օրը անսովոր քամոտ եղանակ էր Թիֆլիսում և այդ պատճառով քաղաքիս մէջ ինֆլուէնցայով հիւանդացողների թիւը շատ աւելացել է, այնպէս որ մի տան մէջ երբեմն մէկի տեղ երկու-երեք հիւանդ են պառկած։ Բացի այդ՝ տարածւած է երեխաների մէջ քութէշ (սկարլատինա) ասւած տարափոխիկ հիւանդութիւնը։

—

Ապրիլի 4-ին կայացաւ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան Թիֆլիսի բիւրօյի նիստը, որին մասնակցում էին գաւառական քաղաքներից եկած ներկայացուցիչները, խորհրդակցելու մի քանի կարևոր հարցերի մասին, որոնք անմիջական կապ ունեն ընտրողական պայքարի հետ։ Ներկայ էին ներկայացուցիչներ Բագւից, Գօրիից, Վլադիկավկազից և Բորչալուի գաւառից։ Նիստի շարունակութիւնը նշանակւել էր ապրիլի 5-ին։

—

Ներկայումս Թիֆլիսում կազմակերպւում է ոչ մի կուսակցութեան չը պատկանող տարրերից՝ պրօպագանդիստների մի բլոկ (միութիւն), որոնք նպատակ ունեն յետոյ համաձայնութիւն կայացնել կադէտների հետ (սահմ. ռամկ.) Պետական Դումայի համար մի ընդհանուր թեկնածու ընտրելու հարցի մասին։

—

Այսօր, ապրիլի 7-ին III-րդ արական գիմնազիայի դահլիճում աշակերտական խումբը յօգուտ հայ արկածեալների կը ներկայացնէ Աբէլեանի «Մարւոյ ճրագներ», համերգային բաժանմունքներով։ Սկիզբն է ժամի 7½-ին։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ Ներսիսեան դպրոցի բնագիտութեան ուսուցիչ Մելիք-Ալլահվերդեանը կազմել է ֆիզիկայի ձեռնարկ, միջնակարգ դպրոցների դասընթացքը։ Նիւթական միջոցներն են միայն արգելում այդ ձեռնարկը հրատարակելու։

—

Կովկասեան Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյը նշանակւած է սենատոր։ «Հ. Գ.»

—

Բոլոր երկաթուղիների ամառային գնացքների երթևեկութեան ցուցակը գործածութեան մէջ կը մտցւի սոյն ապրիլ ամսի 17-ից։

—

Այսօր, ուրբաթ երեկոյեան, Արտիստական ընկերութեան դահլիճում տեղի պէտք է ունենայ երիտասարդ օրիորդ Կաննա Պարեհնագոյի առաջի համերգը (klavierabend)։ Օրիորդը նուագում է պիանոյի վրայ. նա Թիֆլիսաբնակ յայտնի երաժշտապետ Լևոնիդ Կնինսկու աշակերտուհին է և, ինչպէս լսել ենք, իր տաղանդաւոր նուագածութեամբ մեծ յոյսեր է տալիս ապագայի համար։ Յոյս ունենք, որ երաժշտասէրները չեն թողնի առանց ուշադրութեան երիտասարդ սկսնակին և կը քաջալերեն նրան իրանց ներկայութեամբ։ Համերգը լինելու է տեղիս նորակազմ երաժշտական ընկերութեան օգտին։ Օրիորդը ածելու է կլասիկական ռեպերտուարից պատասխանատու կտորներ, որոնցից են՝ Բեթհովէնի, Շումանի, Շօպէնի և Լիստի գրուածքները։

—

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը. Հայ Ուսուցչական Միութեան Մասնաժողովը խնդրում է Թիֆլիսում գտնուող բոլոր հայ վարժուհիներին, ուսուցիչներին և հոգաբարձուներին շնորհ բերել ամսիս 7-ին, երեկոյեան ժամը 4-ին՝ Յովնանեան դպրոցը՝ խօսելու անցեալ ժողովում կիսատ մնացած հարցերի մասին։

—

Վրաց հոգևորականութիւնը իր կողմից ներկայացուցիչ է ընտրել Պետական Խորհրդի ընտրութիւններին մասնակցելու համար յայտնի հրապարակախօս Գրիգոր Պետրով քահանային։

—

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ Թիֆլիսի նահանգում անտառ եղել է 1,100,000 դեսեատին, որոնցից պետական 479,704 դեսեատին, իսկ մասնաւոր անձերի—620,295 դես.։ Աւելի շատ անտառ եղել է Թիօնեթի, Թելավի, Բորչալուի, Դուշեթի և Ախալցխայի գաւառներում. անտառ քիչ կայ Թիֆլիսի, Գօրու և Սղնախի գաւառներում, իսկ Ախալքալաքի գաւառում համարեա թէ անտառ բոլորովին չը կայ։

—

Ներքին գործերի մինիստրութեան հաւաքած տեղեկութիւնների հիման վրայ ապառքը Եւրոպական Ռուսաստանի 20 նահանգներում հասնում է 21,371,705 րուբլու։

—

Մոսկվայի ընտրութիւնների ժամանակ ժողովրդական ազատութեան (սահմանադիր-ռամկավար) կուսակցութիւնը ստացել է 26,932 ձայն, հոկտեմբերի 17-ի և առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան բլոկը՝ 12435, միապետականները 2263։ Այսպիսով ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը ձայների ընդհանուր թւից ստացել է 68%։ Եթէ ենթադրենք նոյն իսկ, որ բացակայ եղող 14000 ընտրողները իրանց ձայները տային հակառակ կուսակցութեան, դարձեալ ժողովրդական ազատութիւնը կը գերակշռէր ձայների թւով։

—

Մինիստրական խորհուրդը ներկայումս զբաղւած է նոր աքսորավայրեր որոնելու հարցով։ «К. Յ.»

—

«Б. В.»-ի թերթը հաղորդում է, որ բոլոր նահանգապետներին հրամայւած է Պետական Դումայի համար պատգամաւոր ընտրւածների ծառայութեան ցուցակը շուտով ուղարկել Ներքին գործերի մինիստրութեանը։

—

Պետական Դումայի առաջին նիստը կայանալու է ոչ թէ Տաւրիկեան պալատում, այլ Ցարսկոյէ-Սելոյում, Բարձրագոյն ներկայութեամբ։ Այդ օրը այնտեղ կը գնան Պետական Դումայի բոլոր անդամները։

—

Լուր է պտտում, որ զինւորական դրութիւնը ապրիլի վերջերում վերացնելու է։

—

Լուր է պտտում, որ ոսկու առձեռն պահեստը արքունական բարձր շտեմարանից տեղափոխւած է Պետրոպաւլովսկի ամրոցը։ Ինչ վերաբերում է փոխառութեանը, դրա համար ներկայումս եռանդուն բանակցութիւններ են սկսւել գերմանական, ֆրանսիական և ամերիկական բանկիրների հետ։ Որքան մօտենում է Դումայի բանալու ժամանակը, այնքան փոխառութեան յոյսը աւելանում է, թէև, ինչպէս ասում են, ինքը պրէմիէր-մինիստրը համոզւած է, որ փոխառութեան հարցը կախւած է նրանից թէ ինչ բնաւորութիւն կունենայ Դուման։

—

Մի անգլիացի ցանկութիւն է յայտնել գնելու լաւ գնով այն քուէատուփը, որը գործ է դրւել Մոսկվայի մարտի 26 ի թաղական ընտրութեան ժամանակ։

—

«Путь»-ը հաղորդում է, որ երբ առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան Պետական Խորհրդի համար ընտրւած անդամներին, որոնք մեծ մասամբ կազմւած են ռէակցիոներներից, յայտնեցին, որ նրանք պէտք է առաջինը այցելութիւն անեն մինիստրներին, որովհետև սովորաբար Պետական Խորհրդի նշանակովի անդամները առաջին այցելուներն են լինում, նրանք պատասխանեցին, որ իրանք ամենից առաջ այցելութիւն չեն անի, որովհետև իրանք նշանակովի չեն, այլ Պետական Խորհրդի ընտրեալ անդամներ են։

—

«Торг. Пром. Газ.» թերթը հաղորդում է, որ Ներքին գործերի մինիստրութիւնը յայտնել է նահանգապետներին ու քաղաքապետներին, որ աչքի առաջ ունենալով երկրում խաղաղութեան վերականգնումը, այն տեղերում, որտեղ մինչև այժմ պրօֆեսիոնալ միութիւնների ժողովներ չէին թոյլատրւում գումարւել, այսուհետև այդպիսիները թոյլատրելի են, բայց ժամանակաւոր կանոնների խիստ հսկողութեամբ ժողովների ու միութիւնների մասին։

—

Էստօնները, բալտիական երկրի լատիշները, արտասահմանեան լրագիրների ասելով, մշակում են ներկայումս մի յիշատակագիր Ռուսաստանի մի քանի տեղերում կատարւող քստմնելի անցքերի մասին։ Այդ յիշատակագիրը պէտք է ներկայացնեն Հաագայի կոնֆերենցիային, որ մօտաւորութիւն կայ գումարելու մօտ ժամանակներս։ «Стр.»

—

«Пят. Л.» թերթը հաղորդում է, որ Պետերբուրգում հարց է զարթեցւած կովկասեան հանքային ջրերը զինւորական մինիստրութեան իրաւասութեան ներքոյ դնելու։

—

ՁԵԳՎԻ գիւղից (Թիֆ. գաւառ) մեզ հաղորդում են, որ այնտեղ և շրջակայ գիւղերում երևացել են զինւորւած աւազակներ, որոնք գիւղացիների տունը մտնելով կողոպտում են։ Այսպէս, օրինակ, մարտի 19-ին, գիշերը, կողոպտել են Ձեգվի գիւղի բնակիչ Կվասաձէի տունը, այնուհետև հարևան Խանդակի գիւղից կանչել են մի ունևոր կալւածատէր և նրանից փող են կորզել մահւան սպառնալիքով։

—

ԹԷՀՐԱՆԻՑ մեզ գրում են. «Պարսկաստանի հայոց դպրոցները մինչև այժմ մեծ կարիք էին զգում պարսկերէն լեզուի այնպիսի դասագրքերի, որոնք կազմւած լինէին մանկավարժութեան գոնէ տարրական պահանջների համեմատ։ Ահա այդ կարիքին բաւականութիւն տալու համար տեղիս պարսկագէտ պ. Մատթէոս-խան Մելիքեանը ձեռնարկել է պարսկերէն լեզուի մի կանոնաւոր դասագրքի հրատարակութեան, որը պէտք է բաղկացած լինի 4 մասերից։ Նորերս լոյս տեսաւ այդ դասագրքի ա. և բ. մասերին, որ կարճ ժամանակի ընթացքում սպառւեց Պարսկաստանի հայոց դպրոցներում»։

—

Ցիւրիխից հաղորդում են լրագիրներին, որ այնտեղ այս օրերս ձերբակալել են Մոսկվայի փոխադարձ վարկի ընկերութեան կողոպտողներից մէկին, որը իրան անւանում է Ալէքսանդր Բելենցով։ Դա եկել է Ցիւրիխ մարտի 21-ին Վիեննայի ճեպընթաց երկաթուղու գնացքով։ Տեղական իշխանութիւնը տեսնելով, որ նա չափազանց հարբած է և կատաղութեան նշաններ է ցոյց տալիս՝ ձերբակալում է և ուղարկում է յիմարանոցը։ Նրա ապրանքը և պայուսակը բերում են ոստիկանատուն և այնտեղ պայուսակում գտել են մեծ քանակութեամբ ռուսական թղթէ դրամներ։ Երբ հարբածը ուշքի է եկել՝ նրան տարել են ոստիկանատուն, որտեղ նա [illegible] 21 յարձակվողների գլխաւորն է։ Նրա մանրամասն եղելութեան մասին պատմածից իմացւում է, որ ինքը ռուս-յեղափոխական կուսակցութեան է պատկանում, 20 տարեկան է, բանկից փողը յափշտակել է զէնք գնելու համար Նիւյորքում, ուր ճանապարհ էր գնում և արդէն ինքը մահւան վճռի է դատապարտւած։ Բեռնի շվէյցարական բարձրագոյն դատարանը պէտք է պարզէ՝ թէ Բելենցովը սովորական յանցաւոր է թէ քաղաքական։ Առաջին դէպքում նա պէտք է յանձնւի ռուսաց իշխանութեան, իսկ երկրորդ դէպքում—ոչ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապրիլի 3-ին, ցերեկւայ մօտ ժամը 3-ին Պեսկովսկի փողոցի վրայ, Բաղերօվի գեղատան մօտ, Ստեփան Տէր-Աբրամովը (Ցխինվալի բնակիչ) հարբած անցնելիս, ընկաւ էլէքտրաքարշի վագոնի տակ. վագոնը կտրեց նրա ձախ ձեռքի մատները։ Վիրաւորւածը ուղարկւեց Միքայէլեան հիւանդանոց։

—

Ապրիլի 1-ին, գիշերւայ ժամը տասնումէկ և կէսին 2 անյայտ չարագործներ փորձեցին մտնել Ն. Մեսանիկովի ծխախոտի մագազինի պահեստը. կտրեցին պահեստի 2 կողպէքը բակի կողմից, յանկարծ բակը մտաւ տեղական դռնապանը, չարագործները, նրան տեսնելուն պէս, փախան և թռան եկեղեցու գաւթի ցանկապատից և անյայտացան։

—

Ապրիլի լոյս 1-ի գիշերը Միխայիլ Բաբինովիչի էլէքտրականութեան գրասենեակը մտան 8 զինւած չարագործներ, որոնցից երկուսը հագած ունէին երկաթուղու կոնդուկտորի զգեստ և պահանջեցին այնտեղ գտնուող հաշւապահ Բօրիս Օրլովից կասայի բանալին. երբ վերջինը բացատրեց, որ բանալին գտնւում է Բաբինովիչի մօտ, որը բացակայ է, չարագործները կոտրեցին երկաթէ կասսայի արկղը և վերցրին այնտեղից 100 րուբլի փող, բացի դրանից գրասենեակում գտնւող Եվսէյ Կարլինսկուց խլեցին 12 րուբլի փող։ Չարագործներից մէկը սրով ձախ ձեռքից թեթև կերպով վիրաւորեց Բօրիս Օրլովին, իսկ յետոյ հրամայելով Օրլովին և Կարլինսկուն չը դուրս գալ գրասենեակից, չարագործները անյայտացան։ Օրլովը և Կարլինսկին այն աստիճանի վախեցան, որ չարագործների գնալուց յետոյ գրասենեակից ուշ դուրս եկան և դուրս գալիս ոչ թէ բղաւեցին և օգնութիւն խնդրեցին, նոյն իսկ ոչ ոքի չը յայտնեցին։ Չարագործները ովքեր էին, յայտնի չէ, բայց վիրաւորւածների բացատրութիւնից երևում է, որ նրանք եղել են իմերելներ։

—

Ապրիլի լոյս 1-ի գիշերը անյայտ գողեր մտնելով Դաւիթովի մանուֆակտուրնի մագազինը և քանդելով պատը, մտնելով «Էներգիա» էլեկտրականութեան գրասենեակը, գողացել են 800 րուբլու ապրանք։

—

Ապրիլի 4-ին, ցերեկւայ ժամը 12-ին 10-րդ քաղաքամասի ոստիկանատուն մտաւ Թիֆլիսի մաքսատան թարգմանիչ Ստրօգօնովը և յայտնեց, որ ապրիլի 3-ին, գիշերւայ մօտ ժամը 12-ին 3 անյայտ չարագործներ մտան մաքսատան կառավարիչ Ստանիսլավ Իուգեֆովիչի տան բակը՝ կողոպտելու նպատակով, բայց նրանց իսկոյն նկատել էր վերակացուն, որի վրայ մի անգամ կրակել էին, ծակելով նրա գլխարկը։ Վերակացուն էլ կրակեց, բայց ոչ մի հետևանք չունեցաւ։ Չարագործները փախան, թողնելով երկաթուղու ծառայողի մի գդակ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 մարտի

ՕԴԷՍԱ, 30 մարտի։ Քաղաքապետի հրամանով բանտից ազատ են թողնւած քաղաքական 26 յանցաւորներ, իսկ գեներալ-նահանգապետի հրամանի համաձայն՝ արձակւել են քաղաքական յանցաւորների բաժիններում բանտարկւած 44 անձինք։

ՊԱՐԻԶ, 30 մարտի։ Պատգամաւորների պալատում սօցիալիստների գլխաւոր Վայեանը բողոքում է կառավարութեան՝ դէպի ռուսաց փոխառութիւնը ունեցած բարեհաճական վերաբերմունքի դէմ։ Սօցիալիստ Րուզանէն յայտնում է, որ Ֆրանսիան չը պէտք է ստորանայ Ռուսաստանի առաջ։ Բուրժուան պատասխանում է, որ Ֆրանսիան երբեք ոչ մէկի առաջ չէ ստորացել։ Ծրարատարների գործադուլի առթիւ սօցիալիստ Սիմբարը պահանջում է, որ աւելացվի ռոճիկները և որ իրաւունք տրւի նամակատարներին՝ համախմբել սինդիկատ ընտրելու համար։ Բարթուն պատասխանում է, որ կառավարութիւնը կընդունէ նամակատարների օրինացի պահանջները, բայց չէ վախենում նրանց սպառնալիքներից։ Սինդիկատներ գոյութիւն չունեն։ [illegible] գործադուլին մասնակցողներին փոխարինելու են ուրիշները։ Հասարակական և պետական ծառայութիւնները չեն կարող կախում ունենալ անկարգապահ պաշտօնեաներից։ Բարթուն խնդրում է վստահութեան հարցը քննել։ Ապա պալատը անցնում է հերթական հարցերին, հաւանութիւն է տալիս կառավարութեան յայտարարութեան, թողնելով նրա վրայ յիշեալ պաշտօնեաներ նշանակելու գործը։

ՍՕՖԻԱ, 30 մարտի։ Անդրիանապոլից հաղորդում են, որ արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել բուլղար և թիւրք սահմանապահ զօրքերի մէջ։ Թիւրքերը մտել են բուլղարական երկիրը, ուր նրանց վրայ յարձակւել են բուլղար զինւորները։ Հրացանաձգութեան ժամանակ թիւրքերը կորցնելով 3 մարդ, յետ են նահանջել։ Տիրում է վերին աստիճանի յուզւած տրամադրութիւն, այնպէս որ նման դէպքերի կրկնւելը անխուսափելի է։

ՆԷԱՊՕԼ, 30 մարտի։ Մինիստր-նախագահը 500,000 լիրա նուիրեց դուքս Աօստայի նախագահութեամբ կազմւած յանձնաժողովին, իբրև առաջին օգնութիւն՝ վնասւածներին բաժանելու համար։

ԱԹԷՆՔ, 30 մարտի։ Ֆրանսիական դեսպանը ստորագրեց Յունաստանի հետ այն պայմանագիրը, որով յանձնելու են յանցաւորներին։ Այդ պայմանագիրը պէտք է առաջարկւի հետևեալ ամսում։

ԼՈՆԴՈՆ, 31 մարտի։ «Դէյլի Տելեգրաֆ»-ին հաղորդում են Կահիրէից—հաւաստի աղբիւրներից, որ Օսմանեան Եգիպտոսի կօմիսար Մուխտար-փաշան խեդիվի հետ տեսակցութեան ժամանակ Բ. Դրան նոր անընդունելի պահանջներն է առաջադրել։ Օրինակ Բ. Դուռը պահանջում է, որ ինքն էլ իրաւունք ունենայ մի որ և է տեղ գրաւել Սինայի թերակղզում առանց նախօրօք տեղեկացնելու Եգիպտոսին, պնդելով որ Ակաբի և այլ տեղերի օկկուպացիան (գրաւելը) դրա համար օրինակ կը հանդիսանայ. պահանջում է որ Սինայի թերակղզու հիւսիսային սահմանը որոշվի Ակաբից Սուէզ տանող գծով, մի և նոյն ժամանակ յայտնելով իր [illegible] մինչև Ելարիշ։ Հաւանօրէն Եգիպտոսի կողմից սպասւում է ամենակտրուկ մերժում։

ՊԱՐԻԶ, 30 մարտի։ Սենատը ընդունեց բիւջէտը ամբողջովին։ Դեկրէն զեկուցեց Ալժէզիրասի կոնֆերենցիային պատգամաւորների համար բաց թողնւելիք փոխադրութեան մասին և դրա հետ միասին յարակցեց, որ Ֆրանսիան իր աջողութեամբ պարտական է դաշնակից պետութեան և ընդհանրապէս ամբողջ Եւրոպային, որ դէպի ինքը համակրանքով վերաբերւեցին։ Հանդերձ այդ ամենի—անհոգն աշխատանք ցոյցին և ֆրանսիական պատգամաւորները։ Սենատը փոխառութեան հարցը քուէարկեց համարեա միաձայն։

1 ապրիլի

ՊԱՐԻԶ, 30 մարտի։ Սենատում, բիւջէտի հարցը քննելու ժամանակ, արտաքին գործերի մինիստր Բուրժէն Դեկլէյյ ցանկութիւն յայտնեց, որ Բուրժուան հրաժարւէր իր նախորդների գաղտնի քաղաքականութիւնից և հաւատարիմ մնայ ռուսաց դաշնագրութեան, հրաժարւելով Անգլիայի հետ համաձայնութիւն կապելուց, որ վերջին 50 տարւայ ընթացքում հանդիսացաւ քաղաքական մի խոշոր սխալ։ Ամբողջ սենատի բողոքները ծածկւում են հռետորի ձայնը։ Բուրժուան պատասխանում է, որ մտադիր չէ գաղտնի քաղաքականութիւն վարել։ Այն օրից—երբ Ֆրանսիան կարողացաւ գնահատել ռուսաց դաշինքը և անգլիական համաձայնութիւնը, նա անկարող է մտածել այդ ակտերը փոփոխելու մասին։ Բուրժուան հաւատացած է, որ սենատը լիովին իր հետ կը համաձայնի։ Դահլիճը դղրդում է երկար ծափահարութիւններից։

ՊԱՐԻԶ, 30 մարտի։ Մինիստր Բարտուն գործադուլ անող նամակաբաշխներին փոխարինեց 300 նոր ծառայողներով։

ԲԵԼԳՐԱԴ, 30 մարտի։ Սերբ չեթաների և գործադուլ անող սօցիալիստ բանւորների միջև տեղի ունեցաւ արիւնահեղ ընդհարում։ 9 մարդ վիրաւորւած են, իսկ մի քանիսները սպանւած։ Ոստիկանութիւնը և զօրքը միջամտեց գործին և այդպիսով յետագայ արիւնահեղութեան առաջն առնւեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մարտի։ Պաշտօնական հաղորդագրութիւնները վճռականապէս հերքում են լրագիրների հաղորդած վերջին յուզիչ և չափազանցրած տեղեկութիւնները—Օդեսայում և Վարշաւայում՝ իբր թէ պատրաստւելիք հրէական ջարդերի մասին։ Օդեսայում գեներալ Կարանգօզովը և Վարշաւայում—գեներալ Սկալոնը ձեռք են առել ամեն միջոցներ՝ ազգաբնակութեան հանգստացնելու, ագիտացիայի առաջն առնելու և անկարգումիւնները ճնշելու համար: Մինիստրութեան պատւէրով Օդեսսայից և Վարշաւից այժմ տեղեկութիւններ են ստացվում իւրաքանչիւր 12 ժամից յետոյ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 մարտի: Մեր արած հարցապնդումին Հաւասի գործակալութիւնը հեռագրում է, որ նա չէ հրատարակել Պետերբուրգի հեռ. գործ. հեռագիրը այն մասին, որ իբր Դուրնովօն և Ակիմովը մօտիկ ապագայում հեռանալու են իրանց պաշտօններից: Ուստի և «Бирж. Вѣд.» լրագրի լուրը մտացածին է հանդիսանում:

ԿԻԵՎ, 31 մարտի: Նահանգապետը բանտից ազատել է քաղաքական 72 բանտարկեալների, որոնց թւումն են պօստ-հեռագրական գործադուլին 16 մասնակցողները:

ՏՕԿԻՕ, 31 մարտի: Վաղը Սայօնեն մեկնում է Մանջուրիա, ուր, ինչպէս ենթադրում են, պէտք է կարևոր խօսակցութիւն ունենայ մարկիզ Իտօի հետ, որ Մանջուրիայից Սէուլ է մեկնելու:

ՎԱԼՏԷՄՕՐԱ, 31 մարտի: Ռուսաստանը պատուիրել է 6, իսկ Գերմանիան 4 ստորջրեայ նաւակներ, 150 ֆուտ երկարութեամբ: Նաւակները լինելու են գազով լցված մեքենաներով, որոնց նման դեռ մինչև այժմ չէ կառուցվել, և որոնք, ըստ երևոյթին, կարող են մի ժամում 18 մղոն տարածութիւն անցնել:

ԿԱԼՈՒԳԱ, 31 մարտի: Նահանգապետի հրամանով ազատ են թողնվել քաղաքական 8 բանտարկեալներ:

ԲԱԳՈՒ, 31 մարտի: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը նաւթային պրոմիսլաների ներկայացուցիչներին մատնացոյց արեց, որ անհրաժեշտ է իջեցնել նաւթային վառելիք նիւթերի գինը, ի նկատի ունենալով արդիւնաբերութեան և առևտրի օրըստօրէ աճող շահը, և նոյնպէս այն պատճառով, որ քարածուխի գործածութեան օրըստօրէ մեծացող կարիքը և ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան—քարածուխի տեղափոխման համար ձեռք առած միջոցները ստիպում են շատերին, նաւթի բարձր գների պատճառով քարածուխ գործածել:

ՊԱՐԻԶ, 31 մարտի: Պատգամաւորների պալատը, ձայների մեծամասնութեամբ—440-ով ընդդէմ 39-ի, ընդունեց բիւջէտը ամբողջովին հանդերձ բիւջէտային մասնաժողովի արած աննշան ուղղութիւններով:

3 ապրիլի

ԼՕՆԴՕՆ, 21 մարտի: «Տրիբունին» հաղորդում են Պեկինից, որ բրիտանական զօրքի հրամանատար գեներալ Վենտրիսը և գլխաւոր երկրաչափ Բրէյնէրը մեկնեցին Վէյ-հայ-վէյ, ըստ երևոյթին չինական զօրքերը ցրելու համար, բայց իրօք հիմք կայ ենթադրելու՝ որ նպատակ ունեն նաւահանգիստը վերադարձնեն կրկին Չինաստանին:

ՊԱՐԻԶ, 31 մարտի: Պօստ-հեռագրական ծառայողները գիշերվայ խորհրդակցութեան ժամանակ վճռեցին միանալ գործադուլին և ընտրեցին դաշնակցական կօմիտէ: Պօստ-հեռագրական ծառայողների ընդհանուր դաշնակցութեան խորհուրդը յայտնեց, որ գիշերվայ խորհրդակցութիւնը պէտք է զբաղվէր միայն պօստային վարչութեան փատահութեան (фаворитизмъ) հարցով: Այդ տեսակէտից և խորհուրդը պարտաւոր չէ գտնում համակերպվել ժողովի՝ գործադուլի հարցի վերաբերմամբ արած որոշումների հետ:

ՏՕԿԻՕ, 1 ապրիլի: Այսօր առաւօտեան Ֆօրմօզա կղզում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ:

ՊԱՐԻԶ, 1 ապրիլի: Մինիստրների խորհրդի այսօրվայ ժողովում Բարտուն յայտնեց, որ պօստային ստորին ծառայողների գործադուլը դիմում է իր վախճանին: Ծառայողների ա- [illegible] համաձայնեց Բարտուի՝ գործադուլի վերաբերմամբ արած բոլոր ձեռնարկութիւններին:

ՆԷԱՊՕԼ, 1 ապրիլի: Անցեալ գիշեր համեմատաբար աւելի խաղաղ անցաւ: Նէապօլում և շրջակայքում տեղացող մոխէ անձրևը դադարել է: Քաղաքն ընդունում է իր սովորական տեսքը: Կէսօրից յետոյ հաւանօրէն կը վերսկսվի Վէզուվի շուրջը գտնվող երկաթուղու երթևեկութիւնը մինչև Օտտոեանօ:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 1 ապրիլի: Բռնված է 10 մարդուց բաղկացած մի աւազակային խումբ, որ սարսափ էր գցել քաղաքում անիշխանականների անուան տակ գործելով: Նրանց մօտ գտնված են զէնքեր և մի անպատրաստ ռումբ: Կողոպտիչների թւում ճանաչել են երկաթուղային դրամատարին վիրաւորելու, պօստի վրա յարձակման և Գուսէվ պաշտօնեայի սպանութեան մասնակցողներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 ապրիլի: Պետական խորհրդի կազմի մէջ է մտնում մինիստրների կօմիտէի գործերի կառավարիչ ստատս-սէկրէտար բարոն Նօլդէն: Սենատօրներ են նշանակվում ներքին գործերի մինիստրի օգնական Վասացին՝ միաժամանակ ստանձնելով գաղտնի խորհրդականի պաշտօնը, Կովկասի Փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյը և Իրկուտսկի դատաստանական պալատի գլխաւոր նախագահ Երակօվը, վերջինս մնալով իր պաշտօնում:

ԲԷԼԳՐԱԴ, 1 ապրիլի: Գլխաւոր դաւադիրներից մէկը, գեներալ Ատանցկօվիչը, արձակվում է պաշտօնից համաձայն խնդրագրի: Այդ բանը հաշւի չէ առնվում, որպէս զիջում Անգլիայի վերաբերմամբ, այլ որպէս հետևանք երէկվայ արիւնհեղութեան, որ եղաւ սօցիալիստների և կօմիտաների միջև: Ատացկօվիչը վերջիններիս կազմակերպիչն էր:

ՊԱՐԻԶ, 1 ապրիլի: «Թանը» հրատարակում է իր ասելով ռուսաց նոր փոխառութեան վերջնական պայմանները: Ապրիլի 26-ին բաց կը թողնվի 2, 250 միլ. ֆրանկ, 5%-ային պարտատոմսերի ձևով, 88 դրամարժէքով: Ծածկելը լինելու է զանազան ժամանակամիջոցներում 2% պակսորդով: Ստորագրութեան ժամանակ վճարվում է 10%, իսկ բաժանելու դէպքում 18%, ապա օգոստոս, նոյեմբեր և փետրվար ամիսներում 20%: Ֆրանսիան վերցնում է Բէլգիայի և Շվէյցարիայի մասնակցութեամբ 1200 միլ., Անգլիան՝ 330 միլ., Հօլանդիան՝ 55, Աւստրիան՝ 165 միլ., Պետերբուրգը՝ 500 միլ.: Պետութիւնների վերցրած պարտատոմսերի ջնջումը մէկը միւսին, անկարելի է համարվում 2 տարի շարունակ:

ՀԱԱԳԱ, 1 ապրիլի: (Րէյտէր): Վերջնականապէս վճռված է, որ երկրորդ խաղաղար կօնֆերենցիան այս տարի չը կայանայ:

ՊԱՐԻԶ, 1 ապրիլի: Պաշտօնապէս պօստային ծառայողների գործադուլը վերջացած պէտք է համարել: Նամակատարները խմբովին վերսկսեցին աշխատանքները, թէև մօտ 500 ծառայողներ վճռեցին շարունակել գործադուլը:

ՄԻՆՍԿ, 1 ապրիլի: Ազատ են թողնված կրկին քաղաքական 30 բանտարկվածներ:

4 ապրիլի

ՏՕԿԻՕ, 2 ապրիլի: Ֆօրմօզա կղզում երէկվայ երկրաշարժը աւելի ուժեղ է եղել, քան մարտի 4-ի երկրաշարժը: Կրկին ամենից շատ վնասվել է Կագի քաղաքը: Նախկին երկրաշարժից անվնաս մնացած բոլոր տներն այժմ աւերակ են դարձած: Մինչև այժմ կազմած հաշուից երևում է, որ սպանված են 109 հոգի, վիրաւորված են 29: Սակայն երկիւղ են կրում, որ սպանվածների թիւը կրկնապատկվի: Շատ քաղաքներում և գիւղերում տեղի են ունեցել փլուածքներ, որոնք բոլորովին փոխել են տեղագրական ձևակերպութիւնները: Հազարաւոր մարդիկ մնացել են բաց երկնքի տակ: Եղել են սիրտ մորմոքող տեսարաններ: Վարչութիւնը եռանդով օգնութիւն է ցոյց տալիս վնասված ազգաբնակութեան (Րէյտէր):

ՏՕԿԻՕ, 3 ապրիլի: Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն Ֆօրմօզայում պատահած երկրաշարժի ժամանակ սպանված են 9 մարդ, 43-ը վիրաւորված են և 1044 շինութիւն փլվել են: Ընդհանրապէս վնասվել է 1697 շինութիւն:

ՊԱՐԻԶ, 3 ապրիլի: «Двадцатый Вѣкъ» լրագրի լուրը, որ իբր մի ժամանակ ռուսաց ֆինանսների մինիստրութեան գործակալը աշխատում էր շարունակ տեսակցվել ֆինանսների մինիստր Պուանկարէի հետ՝ բանակցութիւններ վարելու փոխառութեան համար,—ոչ մի բանի վրա չէ հիմնված: Գաղտնի խորհրդական Ռաֆալօվիչը, որ սկզբներից էլ բարի յարաբերութիւնների մէջ է եղել Պուանկարէի հետ, բանակցութիւնների ամբողջ ընթացքում ֆինանսների մինիստրութեան մէջ հանդիպում էր շատ սիրալիր վերաբերմունքի և լիակատար աջակցութեան:

ՊԱՐԻԶ, 4 ապրիլի: Դումէրը ճառ արտասանեց, որի մէջ քննադատութեան ենթարկեց զինւորական ծառայութեան օրինագիծը: Դումէրի կարծիքով, օրինագիծը հարկաւոր է փոփոխել և լրացնել այն մտքով, որ ապագայ զինւորի քաղաքացիական կեանքը և զինւորական նախապատրաստական վարչութիւնները բարեկարգման աստիճանի վրա լինեն և որ պէտք է կանօնաւորել զօրակարգը, որով կարճ ժամանակում հնարաւոր կը լինի կրճատել ծառայութեան տևականութիւնը, միաժամանակ զինւորական ույժեր աւելացնելով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 ապրիլի: Երէկ երեկոյեան Պարիզում ստորագրված է փոխառութեան պայմանագիրը և հէնց երեկոյեան էլ հաւանութիւն է գտել ֆինանսների կօմիտէի ժողովից:

ԹԻՖԼԻՍ, 3 ապրիլի: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը քննեց Ղարսի և Երևանի երկաթուղու գիծը և ապրիլի 2-ի գիշերը մեկնեց կառուցվող Ուլուխանլու-Ջուլֆայի գիծը: Մինիստրը այդ գիծը դիտեց մասամբ էլ ձիով շրջագայելով: Մինիստրի ճանապարհորդութեան ժամանակ ընդառաջ էին դուրս գալիս տեղացիների պատգամաւորութիւնները աղով ու հացով և խնդրում էին լրացուցիչ կայարաններ կառուցել իրանց բնակավայրերի մօտ: Քննելով ձեռնարկվելիք գծի երկարութեամբ տունէլների աշխատանքները, մինիստրը վերադարձաւ Թիֆլիս, որտեղից մեկնելու է Փօթի և Բաթում:

5 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Լրագիրների հա- [illegible] ուղարկված է 370 հոգուց բաղկացած քաղաքական յանցաւորների մի խմբակ—Սիբիր ուղարկելու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Նոր փոխառութիւնը կնքված է 2 միլիարդ 250 միլ. ֆրանկ գումարի, 5%-ով, 88 դրամարժէքով, 10 տարուց յետոյ վերանորոգելու իրաւունքով: Ֆրանսիան վերցնում է 1200 միլ. ֆրանկ, Ռուսաստանը 500 միլ., Անգլիան՝ 330., Աւստրօ-Ունգարիան՝ 165 միլ, Հօլանդիան՝ 55 միլ.: Պետական Բանկը զեղջային չափը իջեցրել է 1/2 տոկոսով:

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ, 4 ապրիլի: Պետական Դումայի թեկնածու ընտրված են շրջանային երկրաչափ Տէմիրբեանօվը, կապալառու Դէյտաբէյ Դէյտաբէկօվը, բժիշկ Դօլգատ, մասնաւոր փաստաբան Կօրկմասօվ, որոնք բոլորն էլ ազատամիտ մուսուլմաններ են:

ԲԵՐԼԻՆ, 4 ապրիլի: «Նօրդէյտշէ»-ի ասելով կայսրը Գերմանիայի արևելա-աֆրիկեան կալուածքների նահանգապետ է նշանակել Վարշավայի նախկին գեներալ-հիւպատոս Բարոն Րեխէնբերգին:

ՕԴԷՍՍԱ, 4 ապրիլի: Տօների առաջին օրերը անցան սովորական կարգով: Հեռաւոր Արևելքից հասնում են Օդէսսայի վիճակի զօրքերը: Քաղաքը հանդիսաւոր ընդունելութիւններ է ցոյց տալիս: Բանւորների լիազօրների ժողովում ընտրված են 2 չափաւոր ուղղութեան տէր անձինք:

ՀՌՕՄ, 4 ապրիլի: Վատիկանի մօտ նշանակած ռուսաց նոր մինիստր Սազօնօվը այսօր պապին յանձնեց ընծայագրերը:

ՎԻԷՆՆԱ, 4 ապրիլի. Բանկի ֆիրմաների սինդիկատը, որ իր վրա է վերցրել ռուսաց փոխառութեան իրականացնելու գործը, ապրիլի 13-ին կը բանայ ստորագրութիւն, եթէ մինչև այդ ժամանակ փոխառութեան հարցը վճռվի: Կայսրն Իտալիայի թագաւորից ստացաւ շնորհակալական մի հեռագիր Վէզուվից պատահած ցաւալի դէպքի առիթով յայտնած ցաւակցութեան և վնասվածների օգտին նպաստ նուիրելու համար:

Կ. ՊՕԼԻՍ, 4 ապրիլի: Զատկի առաջին օրը Բլաշկարիում, սերբական սանջակում ընդհարում է տեղի ունեցել կանօնաւոր զօրքի և բուլղարական մի չէտայի մէջ: Չէտայի 46 մարդուց 31-ը սպանված են, մնացածներն էլ կրել են ապաստանած տան մէջ, որը այրվել է հէնց իրանց ռումբից: Զօրքը կորցրել է 4 սպանված և 5 վիրաւորված:

ՊԱՐԻԶ, 4 ապրիլի: Ֆրանսիական կառավարչական և հասարակական շրջանները զարմացած են սահմ.-ռամկ. կուսակցութեան ռուսների հակա-հայրենասիրութեան վրա, որոնք եկել են այստեղ յեղափոխականների հետ և եռանդով ագիտացիա են մղում ռուսաց փոխառութեան դէմ, տարածելով Ռուսաստանի սնանկութեան մասին զանազան լուրեր: Ֆրանսիական պարլամենտի մի յայտնի անդամ մի խօսակցութեան ժամանակ յայտնել է, որ այդպիսի գործողութիւնները հաւասար են դաւաճանութեան: Եթէ այդ բանը պատահէր Եւրոպայի մի ուրիշ կուլտուրական պետութեան հետ, այն դէպքում այդպիսի գործիչներին հասարակական կարծիքը միաձայն կը դատափետէր, իսկ եթէ այդ տեղի ունենար ոչ կուլտուրական մի երկրում, այն ժամանակ այդպիսի գործիչներին կը գլխատէին:

ԲԷԼԳՐԱԴ, 4 ապրիլի: Գրուիչի մինիստրութիւնը հրաժարական տուեց, որը և ընդունվեց թագաւորից:

ԼԱՆԳ, 4 ապրիլի: Անկարգութիւնները շարունակվեցին կէսօրից յետոյ ևս: Լէվինում գործադուլ անողները քարեր էին նետում ժանդարմների և դրագունների վրա, երբ ձերբակալութիւններ էին կատարում: Լուրջ վիրաւորված են մի օֆիցեր և երկու զինւոր, իսկ շատերը վիրաւորված են թեթև կերպով: Ոստիկանապետը հրամայեց զգուշացնել ամբոխին, որ զօրքը կարող է զէնքի դիմել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Մօսկվայից տեղեկութիւն ստացանք, որ Թնդանօթաձիգ զօրք է ուղարկված Սօրպուխօվից Տամբօվ, ուր, լուրերին նայած, անկարգութիւններ են տեղի ունենում: Կառավարչական շրջանների դիմումներին ոչ մի դրական պատասխան չէ ստացվել այդ մասին:

ՊԱՐԻԶ, 4 ապրիլի: Պարիզի գործակալութեան թղթակցի՝ ռուսաց ընդդիմադիր մամուլի, որ գրում է թէ ֆրանսիական նոր կառավարութիւնը դէպի Ռուսաստանը անբարեացակամ է վերաբերվում, յաւէտես ենթադրութիւնների անկայունութեան առիթով արած ցուցմունքները փայլուն կերպով հաստատվեցին վերջին դէպքերի ժամանակ: Այժմ, երբ կնքված է խոշոր կօնսօլիդային փոխառութիւն, պէտք է ընդունել, որ Րուվիէ, Պուանկարէ և Բուրժուայի եռանդուն, լուսամիտ և լօյեալ աջակցութիւնը բաւականաչափ դիւրացրեց փոխառութեան բանակցութիւնների բարեյաջող ելքը:

ՏՕԿԻՕ, 4 ապրիլի: Այսօր ռուսաց դեսպան Բախմետօվը ներկայացրեց ընծայագրերը, Միկադօին, որը ցոյց տուեց նրան սիրալիր ընդունելութիւն:

ԽԱՐԲԻՆ, 4 ապրիլի: Լուրեր են պտտում, որ իբր Մա և Իւանշիկա գեներալները աւելացնում են իրանց զօրքերի թիւը հարաւային Մանջուրիայում: Պինգուտինեկում կենտրոնանում են չինական զօրքերը, որոնք մեկնելու են Գիրին: Չժալանտուլում պահած են ռուսներից գնած 1900 ձիեր. կազմակերպվում են կամաւոր խմբեր, որոնց կազմի մէջ մտնում են հազարաւոր պատանիներ և որոնք շաբաթական 2 անգամ ժողովվում են վարժութիւնների համար:

ԼԱՆԳ, 4 ապրիլի: Լէվինում տեղի ունեցած անկարգութիւնների առիթով հաղորդվում է, որ գործադուլ անողները երեկոյեան ժողով են կազմել, որի ժամանակ գրգռիչ ճառեր են արտասանվել: Ցրվելով ժողովից յետոյ, բանւորները հանդիպել են հայհոյանքներով իրանց դէմ հանած ժանդարմներին: Երեկոյեան ժամի 7-ին Լէվին է հասել մի հետևակ գունդ, որոնց բանւորները կրկին հայհոյանքներով և քարէ տարափով են դիմաւորել: Մի քանի զինւորներ ծանր վիրաւորված են, իսկ մի քանիսները թեթև: Գործադուլ անողները կատարել են մի շարք անկարգութիւններ, ի միջի այլոց նրանք կտրել են երկաթուղու ճանապարհը: Ծառայողները յետոյ գիծը մաքրել են:

ԲԵՐԴԻՉԷՎ, 4 ապրիլի: [illegible] 17 բանտարկեալների:

ԼՕՆԴՕՆ, 4 ապրիլի: Նիւ-Եօրկից ստացած լրագիրների տեղեկութիւններին նայած, Մաքսիմ Գօրկին, որ Անդրէևայի հետ հարկադրված էր շարունակ փոխել հիւրանոցները և այն կահաւորված տունը, որի մէջ նա ցանկանում էր ապրել, ոմանց ասելով, Նիւ-Եօրկում քրեհել է մի տուն, որի մէջ մտադիր է պատրաստել յեղափոխական կոչեր, միւսների պնդելով՝ մեկնել է Չիկագօ: Ամերիկացիների մէջ Գօրկու ժողովրդականութիւնը բոլորովին ընկել է Անդրէևայի հետ ունեցած միջնադէպքի պատճառով, որին ցոյց է տուել, իբր թէ իրա կինն է:

6 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի: Մինիստրների խորհուրդը ցանկալի համարեց Պետական Դումայի ամենաառաջին հերթականը դարձնել գիւղացիական հարցը: Հարցի բարդութեան և ժամանակի սղութեան պատճառով, ի նկատի ունենալով Դումային մի լիակատար օրինագիծ առաջադրելու անկարելիութիւնը, խորհուրդը որոշեց ներկայացնել միայն մի ընդհանուր ծրագիր, որը կարող է ապագայ պարապմունքների համար իբրև առաջնորդող ծառայել, և դրա հետ ի միասին ներկայացնել ներկայումս զանազան վարչութիւնների մէջ քննվող օրինագծերը:

Այդ վարչութիւնների աշխատանքները և կառավարութեան ընդհանուր ծրագրների համակերպելու նպատակով—գիւղացիական հարցի վերաբերմամբ, խորհուրդն անհրաժեշտ գտաւ կազմել մի առանձին խորհրդակցութիւն, հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի նախագահութեամբ: Մարտի 1-ին հետևեց Բարձրագոյն հաճութիւնը՝ կազմելու մի առանձին խորհուրդ գիւղացիական գործի նախապատրաստական աշխատանքների համար: —Լրագրները հաղորդում են, որ Զատկի գիշեր Բալտիական գործարանի նաւաշինարանի բաժնում ոստիկանութիւնը խուզարկութեան ժամանակ երևան է հանել ռումբերի մի պահեստ.— Ներքին գործերի մինիստրը ծանուցագրել է զեմստվօներին, որ զեմստվային գործունէութեան մասնակցութեան նկատմամբ տղամարդկանց իրաւունքներին համահաւասար—կանանց ևս շնորհելու հարցը քննվելու է զէմստվային և քաղաքային կանօնադրութիւնների վերաքննութեան ժամանակ մօտիկ ապագայում:

ՀՌՕՄ, 5 ապրիլի: Ռուսաց փոխառութեան առիթով «Ջօռնալէ դ'Իտալիա»-ն ասում է, որ այժմ, երբ վերականգնվում է իտալական փողային սիստեմը, Իտալիան ամբողջովին կը ձգտէ ազատել (?) արտասահմանում եղած իր արժէքաւոր երերը. դեռ այն մօմենտը չէ հասել, որ Իտալիան մասնակցէ ֆինանսական խոշոր ձեռնարկութիւնների արտասահմանում:

ԲԵՐԼԻՆ, 5 ապրիլի: Մամուլը եռանդով քննադատում է Գերմանիայի և Իտալիայի յարաբերութիւնների վատանալը: «Գերմանիա» լրագիրը կայսրի կոմս Գօլուխօվսկուն ուղղած հեռագրի առիթով գրում է, որ սեկունդանտների Մէնգուրի հետ համեմատութիւնը աղօտ է, ուսանողական կեանքից արած արտայայտութիւնը չէ համապատասխանում միջազգային կօնֆերենցիային: Գերմանիայի հրէաց շրջանները գրգռված են Ռուսաստանից եկած լուրերից—հրէական հարցի անտեղի փոփոխման առիթով: Ինչպէս յայտնի է, հրէաները ձայն տուին սահմ.-ռամկ., չը խնայելով իրանց ոյժերը և փողը, որոնց փոխարէն նրանց խոստացան անմիջապէս քննել Պետական Դումայում հրէաներին միւս ազգութիւններին համահաւասար իրաւունքներ տալու հարցը: Այժմ այստեղ հաղորդում են, որ սահմ.-ռամկ. կուսակցութիւնը հէնց տակտիկայի տեսակէտից վախենում է իսկոյն և եթ յարուցել հրէական հարցը Դումայում: Տեղական հրէաները սկսում են կասկածել՝ միթէ իրանք խաբէութեան զոհ չեն դարձել արդեօք:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: Այն լուրերը, որ իբր Պետական Դումայի բացման օրից Պետերբուրգի ուսումնարանական հաստատութիւնների մէջ պարապմունքները դադարելու են,—բոլորովին սխալ են:

ՊԱՐԻԶ, 5 ապրիլի: Սահմ.-ռամկ. կուսակցութեան անդամ ռուսները, որ եկել էին այստեղ փոխառութեան հակառակ պրօպագանդա մղելու նպատակով, մէկ գրագանագէտի միջոցով կարողացան տեսակցվել հանրապետութեան նախագահի հետ, բայց ոչ մի աջողութիւն չունեցան: Նոյն իսկ նպատակով նրանք այցելեցին ներքին գործերի մինիստրին, բայց կրկին անհետևանք: Այժմ եռանդով գործում են մամուլի միջոցով, ըստ երևոյթին այդ կատարել տալով փողային միջոցներով:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 5 ապրիլի: Նահանգների հարաւում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ: Գլխաւորապէս վնասվել է Սան-Ֆրանցիսկօն: Շատ շինութիւններ քանդվել են. սպանված են բազմաթիւ մարդիկ:

ՍՈՒՎԱԼԿԻ, 5 ապրիլի: Գեներալ-նահանգապետի հրամանով ազատել են բանտից 70 հոգու, որոնք ձերբակալված էին կառավարչական կարգով:

ԲԱԹՈՒՄ, 5 ապրիլի: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը քննեց Բօրժօմի գիծը, ինչպէս և Բաթումի և Փօթիի երկաթուղային գծերը: Փօթի կայարանում մինիստրն ընդունեց Չիատուրի մարգանց արդիւնաբերողների ներկայացուցիչներին և վճռեց յարուցած մի քանի միջնորդութիւններ: Ապրիլի 5-ին մինիստրը Բաթումից մեկնելու է Սուխում Սևծովեան խճուղիով, իսկ Գագրայից Սօչի և Տուապսէից անցնելով գնալու է Նօվօրօսիյսկ:

ՀՌՕՄ, 5 ապրիլի: Վախճանվեց Եզուիտական աղանդի գեներալ պատեր Մարտինին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի: Ներքին գործերի մինիստրութիւնը ապացուցանում է, որ ներկայումս չէ ձերբակալված Դումայի անդամներից կամ ընտրողներից և ոչ մէկը, առանց դատաստանական մեղադրանքի: Չը նայած նախ քան տօները հրէայ ազգաբնակութեան մէջ տիրող յուզալից լուրերին, ոչ մի տեղ ջարդեր տեղի չունեցան: Մի քանի մեծ կենտրոններում իբր պատահած անկարգութիւնների մասին տարածած լուրերը սխալ են: Այդ մասին մինչև ֆօմինայի շաբաթը մինիստրութիւնը պաշտօնական լուրեր պէտք է ստանար: Ներքին գործերի մի- [illegible] ձայն բոլոր քաղաքներում Զատկին ազատել են քաղաքական շատ բանտարկվածների, մօտաւոր հաշւով մօտ 1200 մարդ: Ոստիկանութեան վարչութիւնը առաջարկել է նահանգապետներին շարունակել ազատել այնպիսի անձանց, որոնք ձերբակալված են ուժեղացրած պահպանութեան կարգով:

ՏԱՄԲՕՎ, 5 ապրիլի: Նահանգապետը ազատել է քաղաքական 35 բանտարկեալների:

ԵԼԻՍԱՎԷՏԳՐԱԴ, 5 ապրիլի: Գեներալ-նահանգապետը դադարեցրել է սահմ.-ռամկ. «Նօվօրօս. Կուրիէր» լրագիրը, վատ ուղղութեան պատճառով, զինւորական դրութեան ամբողջ ընթացքում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատու. հ.
Ց. Մ. ՋԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութեան:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Գ. ԿԶՆԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱՉԵՏՕՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համալսարանի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. ՋԱԽԱՐԲԷԿԵԱՆ
Ներքին եւ Ներվային հիւանդութիւնների
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7: Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16:
(ա. օ.) 8—50

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	[illegible]
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

10/23-ին ապրիլի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, «Memphis» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզօն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քալամաթա, Մարսէյլ, Հավր և Լօնդօն:

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ պակասեցրած գներով, վաճառվում են այ անգամ միայն մինչեւ Պիրէյ, որովհետեւ Պիրէյից մինչեւ Մարսէյլ Ա. կլասսի բոլոր տեղերն բռնված են:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում, թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608: Գրասենեակը բաց է 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից:
(ու.) 1—1

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

հրաւիրում է այն բոլոր անձանց, որոնք խնդիր են տուել որբ աղջկերանց մասին ընկերութեան, յանուն Յովհաննէս Խուդադեանցի որբանոցում ընդունելու համար, երկուշաբթի, ամսիս 10-ին, առաւօտեան ժամը 10 և կէսին շնորհ բերեն իրանց որբերի հետ ընկերութեան գրասենեակը, որտեղ տեղի է ունենալու 3 նոր որբերի ընտրութիւն: Նրանք, որոնք մինչև այժմ խնդիր չեն տուել և որբեր ունեն, կարող են նոյն օրը նոյնպէս որբերին բերել ընկերութեան գրասենեակը: 1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ԿԱՅԾ"
ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՕՐԱԹԵՐԹ
Առ այժմս լոյս կը տեսնի շաբաթական առնուազն երկու անգամ:
Բաժանորդագրութիւնն է Թիֆլիսում ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը 3 ր. 50 կ., 3 ամ —1 ր. 20 կ., մի ամսվան—10 կօպ., Թիֆլիսից դուրս. մինչև տարվայ վերջը 4 ր., ամս. 1 ր. 40 կօպ. կամ 50 կօպ.: Առանձին № № 3 կօպէկ.
Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, Сололакская. № 3. 2—3

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

Մարտի 19-ի ընդհանուր ժողովում մրցանակաբաշխ յանձնաժողովի անդամ ընտրուեցին պ. պ. Տիգրան Յովհաննիսեան, Աշոտ Աթանասեան, Տիգրան Զաւէն, Միքայել Ջաբար, Ստեփան Քափանակեան և Գէորգ Պետրոսեան:

Մրցանակները (երեք մրցանակ յանուն տիկին Մ. Մակարեանի, իւրաքանչիւրը 150 ր. և երկու մրցանակ պ. Աղասի Մելիք-Այվազեանի, իւրաքանչիւրը 100 ր.) յատկացված են բոլորովին նոր կամ միայն վերջին սէզօնում ներկայացված լաւագոյն հայերէն ինքնուրոյն պիէսների համար, իսկ պ. Մելիք-Այվազեանի մրցանակներից մէկը՝ առանձնապէս ժողովրդական կեանքից վերցրած պիէսի համար:

Միևնոյն պիէսի հեղինակը, նայելով գրուածքի արժանաւորութեան, կարող է ստանալ նաև երկու կամ երեք միացեալ մրցանակներ (200 ր., 300 ր. կամ 450 ր.):

Մրցման ենթարկվող պիէսները պէտք է ուղարկվեն յանձնաժողովի նախագահ պ. Տի րան Յովհաննիսեանի հասցէով (Ռուսաստանից՝ Тифлисъ, Сергіевская, № 1, присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу, իսկ արտասահմանից՝ Russie, Caucase, Ti lis, Avocat Tigran Oohannissian) ոչ ուշ քան 1906 թ. սեպտեմբերի 1-ը:

Հեղինակների անունները պէտք է անյայտ լինեն յանձնաժողովի անդամներին, ուս պիէսների վրա պէտք է մակագրել կեղծանուն կամ մի բնաբան, իսկ մի ծրարում, որի վ [illegible] պէտք է լինի հեղինակի իսկական անունը: Մրցանակները յատկացնելուց յետոյ, յանձնաժողովը կը բանայ միայն այն ծրարները, որոնց տէրերը մրցանակի կարժանանան: Միւս ծրարների տէրերը նեղութիւն կը կր յետ ստանալ իրանց պիէսները իրանց ցոյց տուած անձի միջոցով կամ հասցէով ստորագրե իրանց պահանջը իրանց ընտրած կեղծանունով կամ բնաբանով:

Մրցանակաբաշխութեան արդիւնքը կը յայտարարվի Հայոց Դրամատիկական ընկերութեան 1906 թ. տարեկան ընդհանուր ժողովում, որ կայանալու է սեպտեմբեր կամ հոկտեմբե ամսին: (1, 7, 12) 2—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльный журналъ
„ЭХО СРЕДНЕЙ ШКОЛЫ"
на 1906 годъ.

Органъ «Эхо Средней Школы» издается при участіи прогрессивныхъ силъ педагогическаго міра, учащихся и родителей, и ставитъ девизомъ: **свободная, автономная, демократическая школа.**

Условія подписки:	**Разсрочка:**
Безъ дос. до конца г. 3 р.	При подп. 1 р. 50 к. 1 сентября 1 р. 50 к.
Съ дост. и перес.—4 р.	При подп. 1 р. 50 к. 1 июня 1 р. 50 к. 1 сентября 1 р. 50 к.

За границу—5 р., отд. номер. 10 к.
Контора редакціи приглашаетъ агентовъ для распространенія журн., и предлагаетъ киижн. маг. пріемъ подписки, объявленій и розн. продажу. Въ провинц. номер. высылаются по получен. аванса.
Главная контора СПБ., Загородный, 28.
книжн. маг. «КУЛЬТУРА».
Редакція—Фонтанка, 108, кв. 39.
Редакторъ-Издатель, И. Г. Цатурянъ.

Լոյս տեսան
Բժ. Ա. Բուդաղեանի վերջին երեք նոր գրքերը.
1. Նուէր հայ զինւորին (20 պատկ.) (Առաջին օգնութիւն մինչեւ բժշկի գալը . . 20 կ.
2. Նուէր հայ վարժապետին (Դպրոցական առողջապահութիւն) . . . . . 20 »
3. Նուէր հայ դպրոցականին . . . . 10 »
Ուսումնարաններին, որոնք կը պահանջեն վերադիր վճարով ամենաքիչը 100 օրինակ, զեղջ 40%:
Պահեստը С.-Петербургъ Пушкинская Скоропечатня Лештуковъ пер. 4.
(օ. մ.) 1—6

Տափի-Թաղի (Քամոյենց) ս. Գէորգ եկեղեցու երկու թափուր ԽԱՆՈՒԹՆԵՐ, Սէվերնի-Նօմերներ հիւրանոցին կից, բոլորովին նորոգած, տրվում են վարձով: Խանութները յարմար են և գրասենեակի համար: Պայմանների մասին տեղեկանալ նոյն եկեղեցու երէցփոխ Վարդապետեանից, Սուդէբնայա փողոցում, տուն № 17:
1—3

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միքայել Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում, Ս փական տ., տելէֆօն № 791: (ա. օ.) 102—1

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մ զային, վեներական և մորթու ախտ ունեց հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի Պասկեվիչա փող. № 33/15 տ. Միրիմանեա (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 63—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սի լիսական հիւանդութիւնների. ընդունում է ւանդներին ամենայն օր, առաւօտեան 12- ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկ Սեմէնօվսկի փողոց № 20:
(ու. կ. ե.) 8—20

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլ և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյե 6—9 ժամ.: կանանց և երեխաների համ 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօ սպէկտի և Կաղեսսկայա փողոցի, տուն Բ մամչեանի: Մուտքը Կաղեսսկի փողոցից № 3
(ա. օ.) 121—300

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մօսկվայի համալսարան կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս զանգքասեռական, սիֆիլիսի և կաշու թիւններ ունեցողներին: Ընդունելութիւն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5- ժամին երեկոյեան: Բօլշէվսկայա փող. № 1 «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն №
(ա. օ.) 11—20

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадат. ул. № 15